


2031

Augenlos
für alle

$\frac{20}{72-51}$



ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ
ՓԱՆԿԷՔ



20
P-51

ԼԵՈՆԵՐԸ ՓԱՆԿԷՔ

20
7-51

03 AUG 2000

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ
ՓԱՆԷՔ

բացատրում

ԵՐԵՔ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԷՁ

ձ. Ֆ. ԲԸԹՂԸՐՖՈՐՏԻ

Կողմէ

“Escape to the Kingdom”

Armenian



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

* * *

էջ

Փախուստի ճամբան .. 3

«Սուրբ Տարի»-ին Ազ-
գեցութիւնը Խաղա-
ղութեան Ու Բարդա-
ւաճութեան Վրայ . 25

Թաղաւորութեան Օրհ-
նութիւններ Ժողո-
վուրդին Համար .. 48

8936
~~5026~~

24 AUG 2013

2031

03 AUG 2009

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Ս. Գրոց վրայ հիմնելով՝ այս գրքոյիը անժխտելի կերպով ցոյց կու տայ թէ դարերու ամենամեծ պատերազմը խիստ մօտալուտ է:

Ան կ'ապացուցանէ թէ՛ «սուրբ տարի» (1933—1935) կոչուածը փախուստի ունէ ճամբայ մը չպիտի կրնայ ցոյց տալ:

Գրիստոսի իշխանութեան տակ դրուած Աստուծոյ թաղաւորութիւնը հոս է, ու ան ցոյց կու տայ թէ՛ փախուստի ճամբան եւ թէ՛ իր օրինաց հնազանդողներուն շնորհելիք օրհնութիւնները:

Հրատարակիչ՝
COPYRIGHTED 1933
AND PUBLISHED BY

WATCH TOWER
BIBLE AND TRACT SOCIETY
International Bible Students Association
117 ADAMS ST., BROOKLYN, N. Y., U. S. A.

Made in the United States of America


ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ՝

Անդրիա, Գանատա, Ֆրանսա, Գերմանիա, Զուիցերիա, Բուլմանիա, Արձնթիւն, Յունաստան, Հնդկաստան, Ալբերիա, Երիտոս, Թուրքիա, Կայսր Երկիրներ:



18707-58

ՓԱՆՈՒՍՏԻ ՃԱՄԲԱՆ



ԱՅՍ ատենախօսութեամբ մարդոց զաղափարը չէ որ կ'արտայայտուի: Եթէ ասիկա պարզապէս իմ զաղափարիս արտայայտութիւնը ըլլար՝ պիտի չակնկալէի որ դուք մըտիկ ընէիք: Բայց ասիկա միլիոնաւոր մարդոց քաջամանօթ իրողութիւններով հաստատուած բանախօսութիւն մըն է Ս. Գրքէն, որ Եհովա Աստուծոյ Խօսքն է. եւ լոկ այդ պատճառաւ՝ ամէն երկիւղած անհատ ակնածանօք մտիկ ընելու է անոր:

Աւելի քան մէկ դար առաջ՝ Ամերիկայի Ժողովուրդը այնպէս կը հաւատար թէ Ս. Գիրքը Աստուծոյ Խօսքն է, մարդոց ուղիղ դաստիարակութեան համար ընծայուած. եւ հոն կան շատ մը ընտիր անհատներ որ տակաւին այդպէս կը հաւատան, ահա ստոնց համար այս բանախօսութիւնը սիրովանըի ու քաջալերութեան



պատգամ մը պիտի ըլլայ. իսկ Եհովայի գործին հակառակողներուն՝ ան ունէ՛ք միտիթարութիւն կամ քաջալերութիւն պիտի չընծայէ:

Երբ Եհովայի ուխտեալ ժողովուրդը եգիպտական բռնապետութեան տակ կը հեծէք, Աստուած Մովսէսը իբրեւ պատգամախօս զրկեց՝ Եգիպտոսի Փարաոն թագաւորին աղբարարելու եւ իր ժողովուրդը միտիթարելու համար: Աղբարարութեան պատգամը Եհովայէն է որ կու գար, եւ Մովսէս պարզապէս իբրեւ Անոր պատգամախօսն էր որ կը ծառայէր: Երբ Փարաոն աղբարարութեան պատգամը մերժեց՝ Եհովան Մովսէսի ըսաւ. «Հիմա խօսէ՛ք ժողովուրդին ահանջներուն»: Նմանապէս ներկայիս ալ իշխողները մերժած են Աստուծոյ պատգամը, ուստի Անոր կամքին համաձայն, ժողովուրդները պարտին լսել եւ պատեհութիւն ունենալ՝ որպէս զի անոնք կարենան իրենց զիբքը որոշել:

Երկրիս ազգաց ժողովուրդները ներկայիս մեծ ազգնապի ու մտահոգութեան մէջ են: Անոնք շատ պէտք ունին քաջալերութեան ու միտիթարութեան, ու Եհովա Աստուած քաջալերութեան պատգամ մ'ունի անոնց համար: Այս բանախօսութիւնս բարեացակամ անձերու է որ կ'ուղղուի: Դուք պարտիք ներկայիս դիտնալ թէ ի՞նչ է աշխարհի ներկայտագնապին իրական պատճառը, թէ՛ քիչ ատենէն ի՞նչ տեղի պիտի ունենայ. եւ թէ՛ ի՞նչ ճամբու հետեւելու էք՝ ձեր ազահովութեանն ու պաշտպանութեանը համար:

Վստահ եղէք թէ՛ ես ունէ՛ք հակաճառութիւն չունիմ՝ ո՛չ կղերներուն եւ ոչ ալ քաղաքական կամ առեւտրական իշխաններուն հետ: Իմ միակ պարտականութիւնս է ճշմարտութիւնը խօսիլ: Եթէ Եհովա Աստուծոյ եւ Անոր ճշմարտութեան Սօսքին կը հաւատեք, դուք պիտի գնահատէք այն իրողութիւնը թէ Եհովան գործ մը յանձնած է բոլոր անոնց՝ որ իրեն նուիրուած են, եւ անոնք պարտին կատարել այդ գործը: Քրիստոս Յիսուս՝ Եհովայի «հաւատարիմ ու ճշմարիտ» մեծ Վկան է, եւ ներկայիս երկրիս վրայ եղող ամէն անոնք՝ որ ճշմարտապէս Քրիստոս Յիսուսի կը հետեւին, Եհովայի

վկաներն են ու պարտին վկայութիւն տալ: Ասոնց տրուած գործը որոշապէս յայտնուած է Ես. ԿԱ. 1 եւ 2-րդ համարներուն մէջ, եւ ի միջի այլոց Նա կ'ըսէ իր օճեալներուն. «Եհովա Աստուած ձեզի պաշտօն տուած է հեղերուն ուրախ լուրերը քարոզելու, բոլոր ամբարշտութեանց դէմ Եհովայի վրէժ-խնդրութեան օրը յայտարարելու եւ բոլոր սղաւորները միտիթարելու»: Աստուծոյ վրէժ-խնդրութիւնը Սատանային ու անոր բովանդակ կազմակերպութեան դէմ է. եւ երբ Նա իր վկաները կը զրկէ ձը՝ մարտութեան այս պատգամը տալու, եւ անոնք կը թերանան կամ կը մերժեն հնազանդիլ, այդ վկաները պիտի մեռնին (Եզեկ. Գ. 18): ՉԱստուած իրապէս սիրողները իրենց սիրոյն ապացոյցը կուտան Անոր պատուէրներուն հնազանդելով՝ հոգ չէ թէ մարդիկ ի՞նչ կը խորհին, կ'ըսեն կամ կ'ընեն:

Այժմ կու գանք այն կարգ մը իրողութեանց՝ որոնց դուք քաջատեղեակ էք եւ որոնք աստուածային մարդարէութեան իրականացման հետ կապ ունին: «Քրիստոնեայ Աշխարհ»-ի ազգերուն միջեւ Համաշխարհային Պատերազմը սկսաւ 1914-ին: Այդ պատերազմէն 1800 տարի առաջ Տէրը ատոր մասին նախաձայնեց եւ ըսաւ թէ՛՝ ատիկա առաջին ապացոյցը պիտի ըլլար վերջն աշխարհի: Համաշխարհային Պատերազմին տեսողութեան՝ իշխող տարրերը սա յանկերգը հնարեցին եւ ամենուրեք բարձրաձայն յայտարարել տուին. «Պատերազմը աշխարհը ուժակալութեան յարմար վայրի մը պիտի վերածէ»: Այդ յանկերգը սուտ մարդարէութիւն մըն էր: Այսօր երկրիս վրայ մէկ հատ ուսմականութիւն իսկ չկայ, հասարակութիւն ամէն ազգ գիկտատորական իշխանութեան տակ կը գտնուի: Ես այս առթիւ դիկտատորները չէ որ կը քննադատեմ, հապա իրողութիւններն է որ կը յիշեմ պարզապէս: Միլիոնաւոր մարդիկ քարոզութիւններով եւ բռնի միջոցներով պատերազմի մղուեցան, եւ ողջ մնացողներէն շատեր այժմ չքաւորութեան մէջ են եւ կենաց տարրական պէտքերուն կարօտը կը քաշեն: Երկրի մը մէջ, ուր, կը խոստովանին թէ, առատ ուտելիք, հազուատեղէնի առատ հում նիւթ, առատ բնակա-

րաններ կան, բայց միեւնոյն ատեն հոն կան միլիոնաւորներ՝ որոնք ուտելիքի, հազուատի եւ պատըսպարանի մեծ կարօտը կը քաշեն, եւ կարող չեն այդ պէտքերը վայելելու: Ամէն ոք գիտէ թէ սխալ մը, ծուրան մը կայ:

Աշխարհին իշխողները ներկայիս յուսահատական ճիգեր կը թափեն՝ իրենց հայրենիքները տաղանապալից կացութենէն ազատելու եւ կառավարական նաւը ժայռերուն զարնուելէ արգիլելու համար: Ընդունինք թէ այդ իշխողներն իրենց ամենալաւը կ'ընեն՝ ըստ իրենց մարդկային իմաստութեան: Սակայն անոնք կ'անտեսեն աստուածային իմաստութիւնը: Թերեւս անոնք չափով մը յաջողին եւ թերեւս ալ նիւթական բարդաւաճութեան կարճ շրջան մը յաջորդէ. այդ պարագային՝ իշխողները կամ ա'լ աւելի պիտի գոռոզանան ու անտեսեն Եհովան ու Անոր թագաւորութիւնը եւ կամ հակառակութիւն ցոյց պիտի տան: Եթէ դուք նիւթական բարդաւաճութեան տիրանաք եւ գոնէ կարճ ատենուտ մը համար իսկ անդորրութիւն վայելէք, ես պիտի ուրախանամ. բայց ատով մի՛ խարուիք եւ թող ունէ մէկը Աստուծոյ Ոսօքին ճշմարտութենէն չհեռացնէ՛ գձեղ: Նիւթական ինչ բարդաւաճութիւն ալ որ դայ՝ անոր պիտի յաջորդէ ա'լ աւելի մեծ տաղանայ: Չկայ աշխարհային զօրութիւն մը որ կարենայ ազդերը դուրս քաշել իրենց ներկայ երկսայրի դժուարութենէն (տիլեմմա):

«Քրիստոնէայ Աշխարհ»-ի ազդերը վերջին մի քանի տարիներու մէջ՝ շատ մը դաշինքներ կ'ընթած են աշխարհը պատերազմէ՛ գերծ պահելու համար. եւ ընդունինք թէ անոնք ատիկա ըրած են խաղաղութեան անկեղծ փափաքով: Սակայն իրողութիւնը այն է թէ՛ ազդերը ներկայիս մինչեւ իրենց ակոսները կը զինուին եւ բուռն թափով պատերազմի կը պատրաստուին ու պատերազմ կ'ահկնկակեն, եւ չեն գիտեր թէ ինչո՛ւ: Վախը տիրած է անոնց բոլորին ալ վրան եւ ահ ու դողի մէջ են աշխարհի վրայ դաւլիքը զգալով:

Աստուծոյ ճշմարտութեան Ոսօքը որոշապէս կը յայտնէ թէ՛ խիստ մօտ ապագային տեղի պիտի ու-

նենայ ամենասարսափելի պատերազմը, երբ ունէ ժամանակէ աւելի մեծ թուով կեանքեր պիտի կորսուին: Եհովա Աստուած Իր վկաններուն վրայ պարտք զրած է ներկայիս այս իրողութիւնները ժողովուրդին գիտցնելու: Ս. Գիրքը որոշապէս կը յայտնէ գալիք այդ պատերազմին պատճառն ու արդիւնքը եւ յստակ կերպով մատնանիշ կ'ընէ այն միակ ճամբան՝ որով կրնանք խոյս տալ եւ պաշտպանուիլ ու ապրիլ: Ուստի այս պատգամը կենսական կարեւորութիւն ունի ամէն անոնց համար որոնք կը ցանկան ապրիլ:

Երբ Աստուած երկիրը ստեղծեց ու կառարեալ մարդ Ադամ հոն դրաւ, Նա Արուսեակը որպէս երկրիս գերիշխանը կամ աստուածը սահմանեց: Արուսեակ ապստամբեցաւ Աստուծոյ դէմ եւ ատկէ վերջը անոր անունը փոխուեցաւ Սատանայի ու Բանսարկուի, եւ հաւ այդ անուններով է որ նա ճանչցուած է մինչեւ հիմա: Սատանան յայտարարեց թէ ինք կրնայ ամէն մարդ Եհովան անիծելու մղել, հետեւաբար հրաւէր կարգաց Աստուծոյ՝ որ եթէ կըրնայ՝ երկրիս վրայ դնէ այնպիսի մարդիկ՝ որոնք ամենադառն փորձութեան տակ իսկ հաւատարիմ ու շարունակ նուիրուած մնան Իրեն: Այդ մարտահրաւէրը բոլոր արարածներուն առջեւ հանեց սա հարցը. «Ո՞վ է գերագոյնը, Սատանա՞ն թէ Եհովա Աստուածը»: Սատանային պատեհութիւն ընծայելու համար՝ որ նա իր ամբարտաւան մարտահրաւէրը գործադրէ, Աստուած ընդունեց այդ մարտահրաւէրը եւ թոյլ տուաւ Սատանային որ նա իր կրցածն ընէ իր սպառնալիքը յառաջ տանելու համար: Նոյն ատեն Եհովա խոստացաւ Իր նախասահմանած ժամանակին՝ Իր սիրելի Որդին աշխարհ զրկել որպէս Փրկիչ, Ազատարար ու Արքայ, որ աշխարհի թագաւորն ըլլալով Սատանան պիտի վտարէր, անոր գորութիւնը պիտի փճացներ, ու ժողովուրդներուն բարեխաւութեանը համար արդարագատ կառավարութիւն մը պիտի հաստատէր, որպէս զի ամէնն ալ գիտնային թէ Եհովան է Ամենակալ Աստուածը: 1914-ին՝ սպասուածի այդ նախասահմանուած ժամանակը վերջացաւ, եւ Աստուած փութով Քրիստոս

Յիսուսը աշխարհի Թագաւոր կարգեց: Ատկէ վերջ՝ երկնից մէջ պատերազմ տեղի ունեցաւ Քրիստոս Յիսուսի ու Սատանային միջեւ, ու Սատանան երկինքէն երկրի վրայ նետուեցաւ: Մարդկային աչքերու անտեսանելի ըլլալով հանդերձ՝ Սատանան ու անոր հետեւորդները ցարդ շարունակած են գործել աշխարհիս իշխողներուն ու ժողովուրդներուն մէջ:

Բանասերկու Սատանան աշխարհի ազգերը մեծ պատերազմին մէջ քաշեց, աւելի փափաքելով դանոնք ոչնչացնել քան թոյլ տալ որ ուեւ անհատ Աստուծոյ ծառայէ: Եթէ Աստուած չղաղբեցներ այդ պատերազմը, ան պիտի շարունակուէր մինչեւ որ մարդկային ազգը բոլորովին բնաջինջ ըլլար: Երկրիս իշխողներուն ու ժողովուրդներուն մէջ ներկայիս գոյութիւն ունեցած մեծ տագնապին, անձկութեան ու տառապանքին պատասխանատուն Սատանան է, եւ Սատանան իր ամբողջ ուժը կը գործածէ այդ ճշմարտութեան նկատմամբ ժողովուրդը տգէտ պահելու համար: Եհովա Աստուած բնա պատասխանատու չէ ներկայիս ձեր կրած նեղութիւններուն ու տառապանքներուն համար: Սատանային ներկայ նպատակն է մարդիկ Աստուծոյ հեռացնել, եւ ատոր համար զանոնք մեծ թշուառութեանց, տագնապի ու անձկութեան կ'ենթարկէ. ու անոր երկրային ներկայացուցիչները, մասնաւորապէս կղերները, կ'ըսեն ժողովուրդին թէ իրենց տառապանքներուն պատասխանատուն Աստուած է, եւ ամէն անոնք որ ատոնց խօսքերուն կը հաւատան՝ Աստուծոյ է երես կը դարձնեն: Մենք կասկածելու պատճառ չունինք թէ ո՛վ է աշխարհի ներկայ թշուառութեանց պատասխանատուն: Յայտնութեան ժի. գլուխը մեզի կ'ընծայէ Սատանային երկրիս վրայ նետուելուն արձանագրութիւնը եւ ասպ կ'ըսէ. «Վա՛յ երկրի ու ծովու բնակիչներուդ, վասն զի Բանասերկուն ձեզի իջաւ, որ շատ բարկութիւն ունի՝ գիտնալով որ քիչ ժամանակ պիտի կենայ» (Յայտ. ԺԲ. 12): Ինչպէս որ այս համարը կը յայտնէ, Սատանան զիտէ թէ քիչ ատենէն մեծ պատերազմը անխուսափելիօրէն տեղի պիտի ունենայ եւ թէ ինք պատրաստութեան համար կարճ ժամանակ մը միայն ունի: Այս պատճա-

ռաւ՝ Սատանան ներկայիս ազգերը կը մղէ որ պատերազմի համար մեծ պատրաստութիւններ տեսնեն (Սատանային վատ կազմակերպութեան կրճարոցի պրէսքուրք- շինութեան համար-- տես Եգեկիելի ԺԳ. 10-15, ԻԲ. 28, ըստ զրարար Ս. Գրքի): Սատանային նպատակն է այդ պատերազմով փճացնել ամէն անհատ որ Եհովա Աստուծոյ ու Անոր Քրիստոս Յիսուս Թագաւորին համար կը կանգնի: Ատոր համար՝ Սատանան իր երկրային ներկայացուցիչները կը համոզէ որ բուն կերպով հակառակին ամէն ջանքի՝ որ ճշմարտութիւնը ժողովուրդին ընծայելու կը ծառայէ: Տարակոյս չկայ որ այդ հակառակողներէն շատեր անհատապէս կոյր են ճշմարտութեան նկատմամբ. բայց չնայելով այդ տգիտութեան՝ անոնք Սատանային է որ կը ծառայեն:

Եհովան Համաշխարհային պատերազմը 1918-ին դադարեցուց, որպէս զի ժողովուրդները պատահութիւնը ունենան իրեն ու իր թագաւորութեան մասին ճշմարտութիւնը լսելու: Ամէն անոնք որ չեն հաւատար այս ըսուածին՝ թող կարգան Մտոթէոսի ԻԳ. 14, 21 22-րդ համարներուն մէջ արձանագրուած Յիսուսի խօսքերը: Ատկէ իվեր Աստուած իր վկաները դրկած է՝ երկրիս ժողովուրդներուն պէտք եղած ծանօթութիւնը տալու համար՝ նեղութեան պատճառին եւ արդիւնքին մասին. ու այդ պատճառաւ՝ Սատանան ոչ միայն իր երկրային գործակալները ծառայեցուցած է Եհովայի այդ վկաներուն արդելք հանդիսանալու համար, հասպ նաեւ նա անոնց ամէն մէկը պիտի փճացնէր՝ եթէ Տիրող պաշտպանութիւնը չունենային անոնք: Եւ երբ Եհովայի վկաները մէկ կողմէն ճշմարտութիւնը կը յայտարարեն Եհովայի ու Անոր թագաւորութեան եւ վրէժխնդրութեան օրուան մասին, մեծ պատերազմին համար պատրաստութիւնը կը շարունակուի եւ պատերազմը հեղհեռէ կը մօտենայ:

Մինչեւ հիմա Եհովան ուեւ կերպով միջամուխ չէ եղած՝ աշխարհս պատուհասող նեղութիւնները վերցնելու մէջ: Ինչպէս որ Ինք յայտնած է, իր պատերազմելու ժամանակը Արմազեդոնի պատերազմին ատենն է, որ այլապէս Ս. Գրոց մէջ «Ամենակալ

Աստուծոյ մեծ օրուան պատերազմը» (Յայտ. Ժ. 2. 16) կոչուած է: Այդ մեծ պատերազմին պատճառը սա է. Եկած է ժամանակը որ Եհովա մարդոց մէջ իր արդարադատ կառավարութիւնը հաստատէ երկրիս վրայ. եւ Նա այդ բանը կ'ընէ կատարելու համար վաղուց ըրած իր այն խոստումը թէ՛. Ինք երկրի վրայ խաղաղութիւն ու մարդոց մէջ հաճութիւն պիտի հաստատէ: Այդ արդարադատ կառավարութիւնը՝ կատարելապէս պիտի իրականացնէ ամէն անկեղծ մարդու ամենասրտազին փափաքը: Սակայն այդ բարեբաստիկ ժամանակին դայէն առաջ՝ Սատանան եւ անոր զօրութիւնն ու ազդեցութիւնը լիովին պիտի ոչնչացուին. եւ ատիկա պիտի նշանակէ անոր ամբողջ կաղմակերպութեան ոչնչացումը: Ժողովուրդը պէտք է աղատ ըլլայ՝ արդարութեամբ եւ առանց արգելքի Աստուծոյ ծառայելու, եւ ատիկա կ'ընայ տեղի ունենալ Սատանային իշխանութեան կատարելապէս կործանելէն վերջ:

Իստարիկու Սատանան՝ իր ապստամբութենէն ի վեր՝ աշխարհիս անտեսանելի իշխանը եղած է, եւ տեւական խաղաղութեան ու արդարութեան հաստատուելէն առաջ՝ պէտք է որ այդ ամբարիշտ իշխանութիւնը վերջ դնէ: Ամենուն ալ ճանօթ է թէ այս աշխարհի տեսանելի կառավարիչները խիստ անկատար են: Ներկայիս դրամը մեծ զօրութիւն ունի ազդերուն մէջ. հետեւաբար դրամատէրներու տարրը ամենազօրաւորն է եւ իշխող միւս ազդակներուն վրայ ամենամեծ ազդեցութիւնը կը բանեցընէ: Քաղաքական իշխանները կը զդան թէ իրենք ստիպուած են տեղի տալ դրամատէրներու ազդեցութեան: Արդեօք ոեւէ մէկը կը տարակուսի՞ թէ կըրդերները այս ամբարիշտ աշխարհի քաղաքականութեանց միջամուխ կ'ըլլան: Ամէնքդ ալ դիտէք թէ կղերները այս աշխարհի քաղաքական գործերուն մասնակից կ'ըլլան, եւ հետեւաբար աշխարհի մէկ մասը կը կազմեն: Ինչպէս որ իրենք կը ծանուցանեն՝ Պապականները, Բողոքականները եւ Հրեաները այժմ միացեալ ջանք կը թափեն աշխարհի խաղաղութիւն ու բարգաւաճութիւն բերելու համար, եւ ըստ իրենց յայտարարութեան՝ անոնք բացէ ի բաց

կ'անտեսեն Եհովա Աստուածն ու Անոր թագաւորութիւնը, եւ այդ նպատակնուն իրականացմանը համար՝ անոնք իրենց հնարած միջոցը կը գործածեն: Անոնք Աստուծոյ անունը կը կանչեն, սակայն ամբողջովին կ'անտեսեն Անոր Ծօքն ու թագաւորութիւնը: Թէեւ իշխողները աղօթքի համար մասնաւոր օրեր կը սահմանեն, սակայն Աստուած պիտի չպատասխանէ անոնց աղօթքներուն: Աշխարհիս իշխող երեք տարրերն են՝ դրամատէրները, քաղաքագէտները եւ կղերները: Գիտենք թէ այս աշխարհը խիստ անարդար է. ուրեմն ան չկրնար Աստուծոյ աշխարհը եղած ըլլալ, եւ չենք ալ կրնար ակնկալել որ Աստուած օրհնէ դայն: Շատ ճշմարիտ են Յիսուսի ու առաքեալներուն խօսքերը թէ՛ Սատանան է ներկայ աշխարհի անտեսանելի իշխանը, եւ նա ճշմարտութեան նկատմամբ կը կուրցնէ տեսանելի իշխաններն ու ժողովուրդները-- Յովհ. ԺԲ. 31, ԺԴ. 30, Բ. Կորնթ. Դ. 4:

Եթէ կղերները Եհովա Աստուածն ու Անոր թագաւորութիւնը ներկայացուցած ըլլային, անոնք պիտի մերժէին Սատանային աշխարհին հետ ուեւ առնչութիւն ունենալ, եւ ժողովուրդին առջեւ վեր պիտի բռնէին Աստուծոյ թագաւորութեան կարեւորութիւնը, ու ցոյց պիտի տային ժողովուրդին թէ իրենց ազատագրութեան միակ միջոցը Աստուծոյ թագաւորութիւնն է: Երբ Ազգերու Ընկերակցութիւնը մէջտեղ բերուեցաւ, կղերները ընդգրկեցին զայն, ինչպէս նաեւ խաղաղութեան բոլոր դաշնագրութիւնները որ անկէ ի վեր կազմուած են՝ իրրեւ աշխարհի ազգերուն վերականգնումի միջոցներ: Հռովմ. Զ. 16-ին մէջ կը կարդանք. «Մտայ չք անոր՝ որու որ կը հնազանդիք»: Ուրեմն դիւրին է՝ ձեզի համար մձուել թէ՛ որու է որ կը ծառայէ: Կղերները այս աշխարհի բարեկամներն են, ինչու որ անոր մաս կը կազմեն, եւ հետեւաբար ըստ Ս. Գրոց եւ ըստ իրողութեանց՝ անոնք Սատանային է որ կը ծառայեն եւ ոչ թէ Աստուծոյ ու Գրիստոսի: Ս. Գրոց հետեւեալ համարներն ալ այս բանը կը հաստատեն. «Այս աշխարհիս սէրը Աստուծոյ դէմ թըշնամութիւն է. ուստի ով որ կ'ուզէ աշխարհի բարե-

կամ ըլլալ, ինքզինք Աստուծոյ թշնամի կ'ընէ» (Յով. Ը. 44) : Դուք պիտի նկատէք թէ ես կը բերնեւորու զէ՛մ չարախօսութիւն չեմ ընե՛ր կամ նախատե՛ր դանոնք. հապա պարզապէս ձեզի ծանօթ իրողութիւններն է որ մատնանիչ կ'ընեմ եւ Տիրոջ ներշնչեալ խօսքերն է որ մէջ կը բերեմ այդ իրողութիւնները պարզաբանելու համար : Այս առթիւ կը բերնեւորու մասին ակնարկութիւն ընելու միակ պատճառը այն է՝ որ մարդիկ ճշմարտութիւնը տեսնեն եւ Սատանային թակարդին մէջ չառաջնորդուին : Ե՛հօվայի վկաները՝ Քրիստոսի իշխանութեան տակ զրուած ասուածային թագաւորութեան բացարձակապէս նուիրուած ըլլալուն համար՝ Սատանային դործակալները կը հակառակին այդ վկաններուն կողմէ՛ ձեզի բերուած Ե՛հօվայի պատգամին կամ վկայութեան :

Մե՛ծ պատերազմը արագօրէն կը մօտենայ ներկայիս : Յայտնութեան Ժ.Ձ. գլուխին մէջ զրուած է թէ՛ Սատանան բոլոր ազգերը Արմազեղոն կը ժողվէ՛ Ամենակալ Աստուծոյ մե՛ծ օրուան պատերազմին համար, եւ թէ՛ այդ պատերազմին պիտի մասնակցին բոլոր ազգերը, նամանաւանդ «Քրիստոնեայ Աշխարհ» կոչուած ազգերը : Ինչպէս որ Ս. Գիրքը պարզօրէն կը յայտնէ՝ «Քրիստոնեայ Աշխարհ»-ը ամենամե՛ծ հարուածը եւ կորուստը պիտի կրէ : Այդ պատերազմին «Արմազեղոն» կոչուելուն պատճառը սա է. «Արմազեղոն» բառը կը նշանակէ՝ «Ե՛հօվայի զօրազուներուն խմբավայրը» : Ե՛հօվա Աստուած հաւաքած է Քրիստոս Յիսուսի ճշմարիտ հետեւորդները եւ իր կազմակերպութեան մէջ բերած է զանոնք, ինչպէս որ Յայտ. Ժ.Դ. գլուխին մէջ ցոյց տրուած է : Քրիստոս Յիսուս Ե՛հօվայի գլխաւոր գործադիր պաշտօնեան եւ մե՛ծ մարաջատն է : Ե՛հօվայի կազմակերպութեան տրուած խորհրդարանական անունը Երուսաղէմ է : Զաքարեայի Ժ.Դ. 2-ին մէջ Ե՛հօվա կ'ըսէ. «Բոլոր ազգերը պատերազմի համար երուսաղէմի վրայ պիտի ժողվեմ» : Այդ կը նշանակէ թէ Ե՛հօվան իր ուժերը Քրիստոսի առաջնորդութեան տակ կը ղենէ, եւ իր ճարտար շարժումներով կը ըստիպէ Սատանան որ իր բանակը Աստուծոյ կազմակերպութեան ղէմ հանէ, եւ այդպէս Աստուած Ար-

մազեղոնի պատերազմը կը հարկադրէ : Բանասերկու Սատանան երկրիս աղբերը այդ պատճառաւ պատերազմի պատրաստութեան կը մղէ, եւ անոնց ամէնն ալ Աստուծոյ եւ Անոր թագաւորութեան դէմ կը հանէ. եւ ահա ատոր համար է որ աշխարհի մէջ ճնշուածը, չարութիւնը եւ տառապանքը հետզհետէ կ'աւելնան ու կը սաստկանան :

Երբ այդ հակառակ ուժերը կազմ ու պատրաստ են կռուելու՝ ահա այն ատեն Ե՛հօվա Աստուած պատերազմը պիտի սկսի, իր ուժերը Քրիստոս Յիսուսի հրամանատարութեան տակ զրուած ըլլալով : Զաք. Ժ.Գ. 3-ին մէջ զրուած է. «Եւ Տէրը (Ե՛հօվա) պիտի ելլէ. ու այն աղբերուն հետ պիտի պատերազմի, ինչպէս պատերազմին օրը պատերազմեցաւ (հին ատեն)» : Ատիկ կը հասկնանք այն ինչ որ կ'ըսէ՛ թէ Ե՛հօվան իր հօր ու անպարտելի բանակովը պիտի կռուի Սատանային կազմակերպութեան մէջ եղող ու իրեն հակառակող բոլոր ազգերուն դէմ, որոնք «Քրիստոնեայ Աշխարհ»-ը կը կազմեն : «Քրիստոնեայ Աշխարհ» կոչուած երկիրներու մէջ է որ ամենէն աւելի հակառակութիւն ցոյց կը տրուի՝ ժողովուրդը Աստուծոյ ճշմարտութեան Խօսքը լսելէ արգելելու համար : Գանատայի մէջ՝ որ «Քրիստոնեայ Աշխարհ»-ի մէջ մասն է, բարձր պաշտօններ ունեցող մարդիկ այդ երկիրն ժողովուրդը արգելած են՝ բէտիոյի միջոցաւ Աստուծոյ պատգամը լսելէ : Դուք ըսէ՛ք զիտէք թէ այդ բանը ընելով՝ այդ մարդիկը ոչ թէ Ե՛հօվա Աստուծոյ՝ հապա Անոր թշնամիներուն ի նըպաստ կը դործեն : Ես այդ Յանձնախումբին գլուխը գտնուող մարդը յանձն պիտի չառնեմ մե՛ծարեւ արտը անունը յիշելով : Նա ինձի չէ վնասած եւ չկրնար ավ վնասել, ինչու որ իմ տուած պատգամս իմս չէ : Նա Աստուծոյ դէմ է որ կը կռուի : Իր լսել ուզածը վճռելու կարող ազատ ժողովուրդ մը՝ այս մե՛ծապէս տաղնապայից շրջանին դրկուած է իրեն պէտք եղած բանը լսելէ. եւ ամենէն աւելի՝ Գանատայի մէջ ընակող այդ ինքնակոչ գրաքննիչը Ե՛հօվա Աստուծոյ հակառակած եւ Անոր Խօսքն ու անունը նախատած է : Ե՛հօվան արժանաւայիւ հատուցում պիտի ընէ այդ ամբարիշտ մարդուն եւ անոր խորհրդ-

դատունքուն: Նա կը խոստովանի թէ իր խորհրդադատունքը կղերներն են: Այդ մարդը ու անոր ընկերակիցները կաղմուած են կղերականներու հօտերուն գլխաւորներէն կամ ընտիրներէն: Եհովա յայտարարած է թէ ի՛նչ պիտի ըլլայ այդպիսի մարդոց վախճանը, եւ ըստէ մը վերջ ձեր ուշադրութիւնը պիտի հրաւիրեմ այդ վախճանին վրայ: Ուստի ինձ համար անտեղի պիտի ըլլայ անոր կամ ուրիշ ուեւէ մարդու դէմ նախատական լեզու գործածել: Վրէժխնդրութիւնը Եհովայինն է, եւ Նա է որ Իր թըշնամիներուն նկատմամբ Իր դատաստաններն ի գործ պիտի դնէ:

Ինչպէս որ Ս. Գիրքն ու իրողութիւնները կը յայտնեն, հին ատեններ Եհովա կուր մղեց Իրեն հակառակող եւ Իր ուխտեալ ժողովուրդը ճնշող ազդերուն դէմ: Գաբաւոնի պատերազմին ժամանակ՝ Աստուած երկինքէն սառի խոշոր կտորներ վար նետեց եւ բազմաթիւ թշնամիներ սպաննեց, եւ Նա արեւն ու լուսինը կանգնեցուց՝ երբ Յեսու սպանուած թեան գործը կը լրացնէր: Նա այդ ժամանակ Իր ժողովուրդին համար կուռեցաւ, եւ Նա դարձեալ պիտի կուռի անոնց համար Արմազեղոնի ատեն-- Յեսուայ ժ. 10--13, Եսայ. ԻԸ. 21:

Երբ Յաբինն ու Սիսարան՝ Բաբելի հրամանատարութեան տակ դոնուած Աստուծոյ ուխտեալ ժողովուրդին վրայ յարձակեցան, Աստուած Չուրի հեղեղներ զրկելով մեծ թելով թշնամիներ քշեց տարաւ, ու երկնից զօրութիւնները դանոնք այդ պատերազմին մէջ ոչնչացուցին (Դատոց. Գ. եւ Ն. գլուխները, Սաղմ. 2Գ. 9): Երբ Սենեբերիմ իր բանակը Երուսաղէմի դէմ հանեց ու Եհովան նախատեց՝ անոր 185,000 զինուորները անմեղապէս մեռան (Ես. Լէ. 33--38): Ինչպէս որ Ա. Կորնթ. ժ. 11-ը կ'ըսէ՝ այդ հին պատերազմները Ս. Գրոց մէջ արձանագրուած են իբրեւ պարզ նմոյշներ՝ ցոյց տալով թէ ի՛նչ պիտի պատահի «Քրիստոնեայ Աշխարհ»-ի աչն ազգերուն՝ որոնք Եհովայի կը հակառակին եւ Աստուծոյ կազմակերպութեան դէմ կը համախմբուին Արմազեղոնի ժամանակ: Երբ Ամենակալ Աստուծոյ օրուան մեծ պատերազմը միւսներուն հետ կը բաղ-

դատենք, այդ բոլոր միւս պատերազմները որպէս ճղճիմ կամ մեղմ բաներ պիտի երեւան: Արմազեղոնի այդ պատերազմին մասին գրուած է Երեմ. ԻԵ. գլուխին մէջ. «Տէրը (Եհովան) ազդերուն հետ դատաստան (վէճ) ունի ... ամբարիշտները սուրի պիտի տայ»: Շարունակելով Արմազեղոնի այդ գալիք պատերազմին նկարագրութիւնը՝ Աստուծոյ մարդարէն կ'ըսէ. «Չօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. Ահա չարիք պիտի ելլէ, մէկ ազգէ ուրիշ ազգի պիտի անցնի, ու երկրի ծայրերէն մեծ մարիկ պիտի ելլէ: Եւ աչն օրը Տիրոջմէ սպաննուածները երկրի մէկ ծայրէն մինչեւ միւս ծայրը պիտի ըլլան - անոնց համար սուգ պիտի չընուի, անոնք պիտի չժողովուին ու պիտի չթաղուին, երկրի երեսին վրայ աղբ պէս պիտի ըլլան: Ողբացէք, ով հովիւներ, ու աղաղակեցէք, եւ մոխրի մէջ թաւալեցէք, ով հօտին ընտիրները. վասն զի ձեր մորթուելու եւ ցիրուցան ըլլալու օրերը լրացած են, ու պատուական ամանի պէս պիտի իյնաք: Եւ հովիւներուն փախչելու ճամբան ու հօտին ընտիրներուն ազատուելու միջոցը պիտի կորուսի» (Երեմ. ԻԵ. 32--35): Տէրը այսպէս վճարար կը յայտնէ թէ՛ հովիւներուն ու անոնց հօտերուն ընտիրները եւ ներկայիս Իր պատգամին ու թագաւորութեան հակառակող գրաքննիչները պիտի իյնան ու պիտի չկրնան խուսափիլ:

Եհովան Իր եղեկիէլ մարգարէին միջոցաւ կը յայտարարէ թէ աշխարհի ընդհանրէրը պիտի իյնան սուրով, սովով եւ համաճարակով (Եղեկ. 2. 11): Եհովա՝ կրկին նկարագրելով ահաւոր կոտորածը եւ ոչնչացման միջոցը՝ Իր Զաքարիա մարգարէին բերնով կ'ըսէ. «Եւ այս պիտի ըլլայ այն հարուածը՝ որով Տէրը պիտի զարնէ ամէն ժողովուրդները, որոնք Երուսաղէմի (Եհովայի Կազմակերպութեան) դէմ պատերազմեցան. ոտքի վրայ կայնած ատեննին անոնց մարմինը պիտի հալի, ու անոնց աչքերը իրենց խորչերուն մէջ պիտի հալին, եւ անոնց լեզուն անոնց բերնին մէջ պիտի հալի»-- Զաք. ԺԳ. 12:

Որպէս ուրիշ ապացոյց թէ Արմազեղոնը մարդոց երեք չտեսած ամենամեծ պատերազմն ու ամենասոսկալի կոտորածը պիտի ըլլայ՝ Յիսուս կ'ըսէ.

«Քանզի այն ատեն այնպիսի մեծ ներութիւն պիտի ըլլայ, որու նմանը աշխարհի սկիզբէն մինչեւ հիմա եղած չէ, ոչ ալ պիտի ըլլայ: Եւ եթէ այն օրերը չըքինային, ընաւ մարմին մը պիտի չապրէր»-- Մատթէոսի ԻԴ. 21, 22:

Եհովայի վկաները ներկայիս պարզապէս ուշադրութիւն կը հրաւիրեն այն իրողութեանը վրայ թէ Եհովան է մեծ Աստուածը եւ Քրիստոս Յիսուս Անոր Թագաւորն է, եւ այդ վկաները կը ջանան աշխարհի ժողովուրդները մխիթարել տեղեկացնելով անոնց թէ Աստուած մտադրած է զիրենք աղաւթել եւ պաշտպանութիւն ընծայել անոնց որ Իր կողմը կը կանգնին: Աստուծոյ պատուէրին հնազանդելով՝ Եհովայի վկաները Թագաւորութեան պատգամը ձեզի կը բերեն՝ շատ մը դժուարութիւններ ուրախութեամբ յանձն առնելով:

ՓԱՍՏՈՒՍ

ԻՍ. Սաղմոսին մէջ գրուած է թէ՛ Եհովան Իր թշնամիները պիտի դռնէ ու Արմազեղոնի ժամանակ ոչնչացնէ, երբ ոչ ոք պիտի կրնայ աղատիլ: Գուք Աստուծոյ բարեկամը թէ թշնամին էք: Ս. Գիրքը բացորոշապէս կ'ըսէ. «Ով որ կ'ուզէ աշխարհի բարեկամ ըլլալ՝ ինքզինք Աստուծոյ թշնամի կ'ընէ» (Յակ. Դ. 4): Այս աշխարհիս ոչ մէկ ազգը կամ կառավարութիւնը Եհովա Աստուծոյ բարեկամն է: Աստուծոյ բարեկամ ըլլալու միակ կերպն է կանգնիլ Անոր եւ Անոր Թագաւորութեանը համար: Սատանային աշխարհը վերջացած է, եւ ժողովուրդը պէտք է կա'մ Սատանային եւ կամ Եհովային կողմը դիրք բռնէ: Ալ հասած է ժամանակը որ մարդիկ իրենց ընտրութիւնը ընեն: Փարաւոն, առաջին աշխարհակալ պետութեան իշխանը, Եհովայի հակառակեցաւ, եւ Իր կազմակերպութիւնը կործանեցաւ: Ներկայիս երկրիս վրայ եղող շատ մը իշխողներ ու հանրային պաշտօնեաներ՝ Աստուծոյ կը հակառակին եւ չեն ուզեր Անոր պատգամին մտիկ ընել, եւ ուրիշներուն ալ չեն թողուր որ պատգամը լսեն. ու Աստուած կը յայտարարէ թէ ասոնք ալ նմանօրինակ վախճան մը պիտի ունենան իբրեւ Իր թշնամիները: Հանրային

1878-79

պաշտօններու վրայ եղող մարդիկ ազատ են հրապարակաւ Եհովայի անունը արտասանելու եւ իրենց պահպանութեանը համար Անոր աղերսելու, սակայն անոնց աղերսանքը իզուր պիտի ըլլայ, ինչու որ ներկայիս Աստուծոյ ծառայող մը՝ պարտի հողով ու ճշմարտութեամբ ծառայել Անոր: Այժմ կարելի չէ իրաւախոհութիւն (ֆալսիքովայց) ընել՝ թէ՛ այս աշխարհի ծառայելով եւ թէ՛ միեւնոյն ատեն Եհովայի օգնութիւնը հայցելով. ինչու որ ալ հասած է ժամանակը որ Եհովայի անունը ջատագովուի, եւ Սատանային կազմակերպութիւնն ալ կործանի:

Շատ փոքրաթիւ խմբակ մը կայ՝ որ ժամանակի մը համար կրնայ աշխարհիս բոլոր դրամին ու կառավարական պաշտօններուն տիրել, սակայն Արմազեղոնի ժամանակ՝ ներկայիս ունեցած այդ զօրութիւնները անոնց սեւէ օգուտ մը պիտի չունենան: Այդ իշխանները դաշնակցած են կեղծաւորական կրօնքի հովիւներուն հետ, եւ որքան ատեն որ անոնք կը շարունակեն այդ բանը՝ Եհովան կը յայտարարէ թէ դանոնք որպէս Իր թշնամիները պիտի նկատուի՝ եւ անոնք պիտի չկրնան խուսափիլ: Փախուստի ձամբայ գտնել կարենալէ առաջ՝ անոնք պարտին կեղծաւորական կրօնքէ բաժնուիլ:

Ուրեմն ի՞նչ է մօտալուտ պատերազմի կործանումէն խուսափելու ձամբան: Այդ հարցին մարդոց տուած պատասխանը արժէք չունի, սակայն Աստուծոյ պատասխանը ճշմարիտ եւ ստույգ է: Սովորեալի Բ. դրուիսին մէջ Եհովա Աստուած այդ հարցման կը պատասխանէ, եւ Իր բարեկամը եղողներուն կը յայտնէ փախուստի միակ ձամբան: Եւ կ'ըսէ բոլոր ալրպիսիներուն. «Ժողովուրդէք, ով չսիրուած ազգեր» (ժողովուրդներ-- տես անգլ. Ս. Գիրքը): Ուրեմն որո՞նք են որ այս աշխարհի իշխաններէն չեն սիրուիր: Ամէն անոնք՝ որ Սատանային ճնշող ու ամբարիշտ իշխանութեան կը հակառակին եւ Եհովան ու արդարութիւնը կը սիրեն ու կը ցանկան Անոր արդարադատ կառավարութեան հաստատուիլը տեսնել: Աշխարհի մէջ այդ տեսակ միլիոնաւոր անհատներ կան: Սովորեալի Բ. դրուիսին մէջ Եհովա դարձեալ կ'ըսէ. «Դեռ նախասահմանութիւնը չծնած,



օրը մղեղի պէս չանցած, դեռ Տիրոջը սաստիկ բարկութեան օրը ձեռք վրայ չեկած, Տէրը փնտռեցէք, ով երկրի բոլոր խոնարհները, դուք որ իրաւունքը ի գործ կը դնէք, ... Թերեւս Տիրոջը բարկութեան օրը պահուէք»-- Սոփոնեայ Բ. 2, 3:

Հեղերը անոնք են որ սորվելու տրամադրութիւն ունին: Մինչեւ որ անհատ մը իրողութիւնները չըլտէ՝ չկրնար սորվիլ. եօթներորդ աշխարհակալ պետութեան (Անգլո-Մանրիկեան Կայսրութեան) զանազան մասերուն մէջ՝ ժողովուրդին թոյլ չտրուէր որ բէտիոյի միջոցաւ ճամարտութիւնը լսեն: Սակայն ձեզի պիտի յայտնեմ զիչ վերջ թէ՛ Աստուած կարգադրած է որ նոյնիսկ ատոնք լսեն ճամարտութիւնը: «Քրիստոնեայ Աշխարհ»-ի մէջ եղած բոլոր անձերը շատ չանցած պարտին կամ Նհովայի թագաւորութեան համար եւ կամ անոր հակառակ դերք բռնել. եւ յառաջիկա մեծ պատերազմէն ազատուող եւ ողջ մնացողները պարտաւոր են ճամարտութիւնը փրնտուել, անխախտ կերպով Նհովայի համար կանգնիլ եւ անիրաւութիւն չընել: Թերեւս հարցնէք թէ ինչ պէ՞ս կրնանք Տէրը փնտռել: Ապաւինելով Նհովայի՝ իբրեւ միակ ճամարիտ Աստուծոյն եւ Քրիստոս Յիսուսի՝ իբրեւ աշխարհի Փրկչին ու Թագաւորին եւ ալ չվստահելով աշխարհային ոեւէ ծրագրի կամ հաստատութեան. ապա ուսումնասիրելով Աստուծոյ ճամարտութեան Խօսքը եւ մարդասիրաբար Անոր պատրաստած մեկնաբանութիւնը, ու սորվելով թէ Նհովա ի՞նչ կարգադրութիւնը ըրած է Իրեն ծառայողներուն խաղաղութիւն, բարգաւաճութիւն եւ մըրտընջեանական կեանք պարզեւելու համար: Հեղութիւն փնտռելու պատշաճ կերպն է՝ անկեղծօրէն ջանալ զիտնալու թէ Ս. Գիրքը ի՞նչպէս կը յայտնէ Աստուծոյ նպատակը:

Ինչպէ՞ս կրնանք արգարութիւն փնտռել: Աստուծոյ ճամբաները միշտ ուղիղ են (Սաղմ. ԺԹ. 7-10, ձԺԹ. 75): Եւ կը յայտարարէ թէ Իր Խօսքը՝ Ս. Գիրքն է՝ արդարութեան ճամբէն քալողներուն առաջնորդը (Սաղմ. ձԺԹ. 105): Դուք պարտիք զիտնալ թէ Անոր Խօսքը ի՞նչ կը պարունակէ: Ձեզի այդպիսի զիտութիւն մ'ընծայելու համար Նհովա

Իր մարգարէութիւնը իրականացուց եւ այդ իրականութեանց հրատարակութիւնը ընել տուաւ, եւ այժմ եւս Իր վկաները կը դրկէ՝ յայտնելու համար ձեզի թէ այդ ճամարտութիւնները ինչպէ՞ս եւ ո՞ր կըրնաք դառնել: Այդ վկաները ձեզի Նհովայի՝ եւ ոչ թէ՛ ոեւէ մարդու պատգամն է որ կը բերեն: Ուստի ուղիղը սորվեցէք եւ ապա զայն գործադրեցէք:

Նհովան հաճեցնողներէն ի՞նչ կը պահանջուի: Նհովան Միքեայ 2. 8-ին մէջ այդ հարցման կը պատասխանէ՝ բսելով. «Իրաւունք ընել, ողորմութիւն սիրել, ու խոնարհութիւնով (հնազանդութեամբ) քու Աստուծոյը հետ քալիլ»: Ատիկա կը նշանակէ արդարութիւն ընել ամենուն եւ ոեւէ մէկը չանիրաւել: Ողորմութիւն սիրեցէք եւ ուրիշներուն հանդէպ զրթած եղէք, եւ ամենէն աւելի՝ հնազանդեցէք Նհովայի եւ ոչ թէ՛ ոեւէ մարդու: Երբ դուք այդ զիտութեան կը տիրանաք՝ զայն միայն ձեզի պահելու չէք, հապա ուրիշներուն ալ պատմելու էք: Մարդոց օրհնութեանը համար Տիրոջ պատրաստած թագաւորութեան մասին վկայելով՝ Նհովայի եւ ձեր նմաններուն հանդէպ ունեցած ձեր սէրը ցոյց պիտի տաք: Երբ մարդիկ ձեզ կը պատուիրեն թագաւորութեան աւետարանին մտիկ չընել եւ զայն ուրիշներուն չըբարոզել՝ անոնց պատուէրներուն ուշադրութիւն մի՛ ընծայէք. այլ, ընդհակառակը, Աստուծոյ հնազանդեցէք, եւ անխախտ կերպով Նհովայի եւ Անոր արգարադատ թագաւորութեանը համար կանգնեցէք: Առաքեալները ահա այդ տեսակ ճամբու մը հետեւեցան (Գործք Դ. 19, Ե. 29): Դուք պէտք չէ որ ոեւէ անձի վրայ բռնութիւն բանեցնէք: Աստուած Ինք ի գործ պիտի դնէ պէտք եղած ամէն պատիժ Իր ընտրած կերպովը: Ի՞նչ պիտի ըլլայ աշունց վարձատրութիւնը՝ որոնք այս տաղանապալից շրջանին այդ ուղիղ ընթացքին կը հետեւին: Նհովա կը պատասխանէ. «Թերեւս Տիրոջը բարկութեան օրը պահուիք» (Սոփ. Բ. 3): Ազդերու վրայ դալիք ահաւոր պատերազմէն ազատելու միակ կարելի կերպըն է Աստուծոյ բարեկամն ըլլալ, Անոր հնազանդիլ ու Անոր ուղիղ ճամբէն քալիլ: Ընդունեցէ՛ք զԱնիկա ու Քրիստոս Յիսուս թագաւորը, եւ Անոր

պաշտպանութեանը տակ մտէք. ահա ա՛յդ է վախտատի ու պաշտպանութեան միակ ճամբան:

ժողովուրդները դարերով մարդոց ուսուցումներուն եւ ծրագիրներուն ուշադրութիւն ընծայած են: Մարդկային այդ բոլոր հնարքներն ու ծրագիրները ձախողած են, եւ արդիւնքը այն է որ ներկայիս «երկիր բոլոր սիւները շարժած են» (Սաղմ. 2Ի. 5): Ինչո՞ւ համար դեռ վտանգին մէջ կը կենաք: Ինչո՞ւ համար մտիկ կ'ընէք կոյր առաջնորդներու ձայնին: Սատանային կազմակերպութեան մէջ մնացողները Արմազեդոնի մեծ պատերազմին ժամանակ պիտի մեռնին: Մի միայն անոնք պիտի ապրին՝ որոնք ինքզինքնին վճռաբար Եհովայի եւ Անոր թագաւորութեան պաշտպանութեան տակ կը դնեն: Եհովան դարերով թոյլ տուած է Սատանային որ նա իր ամբարշտութեան մէջ յառաջանայ, եւ այժմ հասած է ժամանակը որ Եհովա անոր զնացքը կասեցնէ: Հաշուեյարդարութեան օրը հասած է, եւ Եհովան բոլոր արարածոց պիտի յայտնէ թէ Ի՛նք է Գերագոյնը՝ որմէ կու գան բոլոր օրհնութիւնները. ու այդ նպատակին համար՝ նա Իր բարկութիւնը պիտի յայտնէ կործանելով Սատանային կազմակերպութիւնը, ինչպէս նաեւ այն ամէն ազգերը՝ որոնք ներկայիս մարդոց վրայ կ'իշխեն եւ կը հակառակին Աստուծոյ թագաւորութեան:

Սակայն ինչէ՞ն կրնանք դիտնալ թէ Եհովայի բարկութեանը արտայայտուելուն ժամանակը հասած եւ Արմազեդոնը մօտեցած է: Այդ հարցման պիտի պատասխանեն Ս. Գրոց մարգարէութիւններէն: Մարդիկ մարգարէութիւնները կրնան հասկնալ այն ատեն միայն՝ երբ անոնք սկսած են իրականանալ: Սատանային աշխարհը վերջ դտաւ 1914-ին, որուն մասին Յիսուս մարգարէաբար ըսաւ թէ նշանակելի պիտի ըլլար ազգերու միջեւ մղուելիք մեծ պատերազմով: Ըստ Յիսուսի մարգարէութեան՝ այդ պատերազմին շուտով պիտի յաջորդէր սով, համաճարակ եւ երկրաշարժներ: Այս ամէն բաները կատարուած են: Յիսուս մարգարէացաւ նոյնպէս թէ ազգերը մեծ տագնապի ու ապշութեան մէջ պիտի ըլլային, երբ մարդոց սիրտերը պիտի նուաղէին դա-

լիք բաներու վախէն (Ղուկ. ԻԱ. 10--26): Ներկայիս աշխարհի մէջ ահա ճիշդ այս կացութիւնն է որ կը տեսնենք: Ուստի ապացոյցը վճռական է: Ամէն բանի առատութիւն ըլլալով հանդերձ՝ ժողովուրդը չքաւորութեան մէջ է, եւ ոչ մէկ ազգ իրական դարման մ'ունի: Բարեացակամ մարդիկ Եհովայի կազդակեն եւ նա Սովոնեայ Գ. Տ-ով կ'ընէ անոնց. «Արեւմն ինծի սպասեցէք, . . . , մինչեւ այն օրը որ որսի համար ոտք ելլեմ. քանզի իմ վճիռս ազգերը ժողվել, թագաւորութիւնները դումարել է, որպէս զի անոնց վրայ իմ սրտամտութիւնս, իմ բոլոր սաստիկ բարկութիւնս, թափեմ. քանզի բոլոր երկիրը իմ նախանձիս կրակովը պիտի սպառի»: «Քրիստոնեայ Աշխարհ»-ի ազգերը այժմ Եհովայի թագաւորութեան դէմ միացած եւ հետեւաբար «ժողովուած» են, ու իշխող այդ բոլոր ուժերը Եհովայի ու Անոր թագաւորութեան եւ վկայութեան դործին կը հակառակին:

Յիսուս այս կէտին շուրջ պատուէր տուաւ՝ ըսելով. «Թագաւորութեան այս աւետարանը այժմ բոլոր աշխարհի պիտի քարոզուի ազգերու վկայութեան համար, եւ յետոյ վախճանը պիտի գայ նեղութեան այնպիսի շրջանով մը՝ որուն նմանը աշխարհ երբեք տեսած չէ» (Մատթ. ԻԳ. 14, 21, 22): Եհովայի վկաները՝ իրենց Տիրոջ պատուէրին հնազանդելով՝ անո՛ր համար կը յայտարարեն այս պատգամը՝ որ իշխողները վկայութիւն ու ազգարարութիւն ստանան, որպէս զի ոեւէ կերպով անոնք չկարենան արգարացնել իրենց ծուռ ընթացքը, եւ ժողովուրդներն ալ պատեհութիւն ունենան Աստուծոյ հաւատալու եւ հնազանդելու ու ազատելու այն ահաւոր հարուածէն՝ որուն քիչ ատենէն պիտի ենթարկուի «Քրիստոնեայ Աշխարհ»-ը: Վկայութեան այդ դործին լրանալէն անմիջապէս վերջ՝ պատերազմը պիտի սկսի: Վկայութիւնը արդէն իսկ տրուած է «Քրիստոնեայ Աշխարհ»-ի ամէն ազգերուն, եւ այդ նպատակին համար՝ պատգամը պարունակող 150 միլիոնէն աւելի գիրքեր ժողովուրդին մէջ տարածուած են. եւ այդ դործը կատարուած է մեծ հակառակութեանց կուրծք տալով: Երբ նկատի առ-

ներք թէ Եհովայի թագաւորութեան այս պատգամը չտրուելը աշխարհային կազմակերպութիւն մը հիմնելու, կամ անդամ չահելու եւ կամ ժողովուրդէն դրամ առնելու նպատակաւ, ուրեմն ինչո՞ւ այսքան հակառակութիւն ցոյց կը տրուի անոր նկատմամբ: Պատասխանը այն է թէ՛ Սատուծոյ ու մարդոց լըշնամիւն եղող Սատանան կը ջանայ մարդիկը խաւարի մէջ պահել, որպէս զի զանոնք ամբողջութեամբ ոչնչացնէ: Ճշմարտութիւնը մտիկ ընողներն ու հնազանդողները պիտի ազատին, ուրիշներ պիտի չազատին: Մարդարէտութիւններն ու բոլոր իրողութիւնները ցոյց կու տան թէ՛ պատերազմը խիստ մօտ ապագային տեղի պիտի ունենայ:

Ոչ միայն Գանատա է որ կը ջանայ ժողովուրդը արգիլել Սատուծոյ թագաւորութեան մասին ճշմարտութիւնը լսելէ, հասկա նաեւ Միացեալ Նահանգաց Մեծ Առեւտրականութեան սեփականութիւնը եղող եւ անկէ ղեկավարուող ըէտիոյի երկու մեծ ընկերակցութիւններ՝ ամէն ճիգ կը թափեն ժողովուրդը արգիլելու որ թագաւորութեան պատգամը չլսեն. սակայն անոնք չեն կրնար յաջողիլ: Եթէ նոյն իսկ աշխարհիս մէջ գտնուած ըէտիոյի ամէն կայան մերժէ թագաւորութեան պատգամը հեռարձակել՝ Աւտուած տարբեր միջոց մը պիտի գործածէ ու փափաքողները պիտի լսեն: Ներկայիս մասնաւոր ձայնագրեր (ֆոնօկրաֆ) կը շինենք, ու ատոնց միջոցաւ պատգամը ընդարձակածաւալ կերպով կը տարածենք թէ՛ Ամերիկայի եւ թէ՛ ուրիշ երկիրներու մէջ: Այսօրեան իմ այս բանախօսութիւնս ելեկարականութեամբ արձանագրութեան կ'առնուի եւ բովանդակ «Բրիտտոնեայ Աշխարհ»-ի ժողովուրդները պիտի կրնան զայն լսել իրենց ուղած ժամանակ: Աւելի եւս՝ այս բանախօսութիւնէն միլիոնաւոր օրինակներ պիտի հրատարակուին եւ ժողովուրդներուն մէջ պիտի տարածուին: Ով որ կ'ուզէ այս բանախօսութիւնէն օրինակ մ'ունենալ, թող երկտող մը դրէ ԴԻՏԱՐԱՆ-ի հասցէին: Ճշմարտութիւնը Եհովայինն է, եւ ան այժմ յաղթանակորէն յառաջ պիտի ընթանայ՝ չնայելով այն ամէն հակառակութեանց՝ զորս թշնամին կրնայ յարուցանել անոր դէմ: Սատանան ներկայիս

իր վերջին դիմադրութիւնն է որ կ'ընէ, ինչու որ նա դիտէ թէ շատ չանցած Տիրոջ բանակին դէմ է որ պիտի կռուի: Սատանային երկրային ներկայացուցիչները կը ջանան աշխարհի հարստութիւնը իրենց ձեռքին մէջ կեդրոնացնել, որպէս զի ժողովուրդները գերիներու վերածուին եւ բռնադատուին անոնց հրամաններն ի գործ դնելու: Մշակութեան հողերը արագօրէն հողագործներու ձեռքէն կ'ելլեն եւ վիթխարի ընկերակցութիւններու սեփականութիւնը կը դառնան: Պողոտաները լեցուած են մարդերով՝ որոնք թէեւ գործել կ'ուզեն, բայց գործ չգտնելով ստիպուած են տեղէն տեղ թափառիլ. եւ ատոնց ամէնը կ'աղաղակեն իրենց նեղութեան մէջ ու անոնց աղաղակները զօրաց Եհովայի պանջններուն հասած են, եւ նա կը յայտարարէ թէ Ինք պիտի պատժէ անոնց կեղեքիչները— Յակ. Ե. 1-6:

Փոքրաթիւ խումբ մը մարդիկ՝ շատ չանցած՝ թերեւս իշխեն երկրիս ամբողջ տեսանելի հարստութեան վրայ, սակայն անոնց դանձերը իրենց օգուտ մը պիտի չունենան: Սատանային աշխարհը վերջացած է ու պէտք է որ կործանի: Եհովայի անպարտելի բանակը ա՛լ համախմբուած է: Մարդկային անքերը չեն կրնար տեսնել այդ բանակին զօրութիւնը: Անոր տեսանելի մասը աննշան է, ինչու որ ան կը բաղկանայ լիովին Սատուծոյ նուիրուած այրերու եւ կիներու փոքրիկ խումբէ մը: Անոնք իրենք իրենց մով տկար են, բայց Տիրոջմով զօրաւոր են ու երանելի է անոնց վիճակը:

Այժմ խօսքս ձեզի կ'ուղղեմ՝ ո՛վ իմ եղբայրներս ու քաջարի վկայակիցներս, դուք այժմ Սիոն Լեռան վրայ հաւաքուած էք Բրիտտոնի՝ մեծ Յաղթողին հրամանատարութեան տակ: Այժմ ձեր երանաւէտ առանձնաշնորհն է Եհովայի գովութիւնները երգել՝ մինչ դէպի պատերազմ կը յառաջանաք: Եարունակեցէ՛ք զիտակցարար ու անասման ուրախութեամբ Եհովայ Սատուծոյ եւ Անոր թագաւորութեան վկայութիւնը յայտարարել, որ մեծ պատերազմին մէջ ձեր ունեցած միակ բաժինն է, եւ ապա տեսէք Ամենակարող Ձեռքին հարուածովը թշնամիին դետին տապալիլը: Թո՛ղ ձեր մարտաները ըլլայ՝ «Եհովայի

ու Անոր պանծալի Թագաւորին սուրբ»: Թշնամիին ուժերը պիտի չկրնան դձեղ գետինը տապալել, ինչու որ Եհովայի յաւիտենական բազուկները ձեղ վեր կը բռնեն: Ներկայիս հաւատարմօրէն ու անվարան կերպով յառաջ մղեցէք ձեր գործը, ու այդպէս դուք Եհովայի անուան շատագուրով թիւր պիտի տեսնէք: Թող չթուլնան ձեր ձեռքերը, հասա խիստ վեր բարացուցէք Եհովայի թագաւորութեան դրօշակը, որպէս զի մարդիկ կարենան իրենց հետեւելիք ճամբան տեսնել, ու Ամենակալ Աստուծոյ համար կանգնելով՝ ապահով փախուստի միակ ճամբան դռնել: Թող ժողովուրդը բարունէ՝ թէ երանելի է այն մարդը որ հաւատքն ու քաջութիւնը ունի ինքզինք անվերապահօրէն Ամենակալ Աստուծոյ պաշտպանութեան տակ դնելու, Որուն անուեր միայն Եհովա է: Նա երկիրը պիտի մաքրէ ամէն տեսակ անարդարութիւններէ, եւ դայն՝ խաղաղութեամբ, առողջութեամբ ու բարգաւաճութեամբ յաւիտենապէս բնակելու յարմար վայրի մը պիտի վերածէ ժողովուրդին համար, մինչ անոնք անդադար կ'երգեն Անո՛ր գովութիւնները՝ Որ ամէն բարի ու կատարեալ պարգեւներու Ընծայողն է:

Մերի հայրդի, այս ոգեւորիչ եւ ճշմարտութիւնը անկեղծ ու անխախ կերպով յայտնող բանաստեղծութիւնները մեծ հետաքրքրութեամբ կարդալէ վերջ, կը յուսանք թէ պիտի փափաքիք հեղինակին դրած միւս օգտաշատ դիրքերն ու դրօշակներն ալ կարդալ: Ծննդածններուն բարեկամը եղող այս աշխարհահռչակ բանաստեղծին, Դատաւոր Բըթհըրֆորտին, հեղինակած բազմաթիւ գրքերէն՝ վերջին տասը տարուան մէջ 160 միլիոն օրինակ աշխարհի չորս կողմերը տարածուած են 60 տարբեր լեզուներով:

Այս մեծ աստուածաբանին գրած գրքերէն ու դրօշակներէն 12 հատ ալ Հայերէնի թարգմանած ենք (տես այս գրքոյի վերջին էջը): Ուստի, աղնիւ բնթերցող, բարեկամարար կը թելադրենք ձեզ՝ որ դո՛ւք ալ օգտուիք այս անշահախնդիր հեղինակին գրութիւններէն՝ ժամ առաջ յայտնելով մեզի ձեր փափաքը: Մեր հասցէն է հետեւեալը.

THE TIDARAN, 117 Adams St., Brooklyn, N. Y.
ԴԻՏԱՐՍՆԸ

«ՍՈՒՐԲ ՏԱՐԻ»-ԻՆ ԱԶԳԵՅՈՒԹԻՒՆԸ
ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՈՒ ԲԱՐԳԱՒԱՃՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

«ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԱՇԽԱՐՀ»-Ի աղագայ ժողովուրդներուն այնպէս ըսած են թէ 1933-ը (Ապրիլ 2, 1933-էն մինչեւ Ապրիլ 2, 1934, իբր 1900-ամեայ Յոբելեան Գրիստոսի Սաչելութեան եւ Յարութեան) «սուրբ տարի» է, եւ թէ անոնք այն յոյսը ունին որ իշխող ուժերու միացեալ ջանքերուն շնորհիւ կրօնական հոսանք մը պիտի ելլէ եւ աղգերը խաղաղութեան ու բարգաւաճութեան գիրկը պիտի քշէ՝ զանոնք իրենց ներկայ բեռներէն ազատելով: Ինչոր լրջամիտ անձինք խաղաղութեան ու բարգաւաճութեան կը ցանկան: Ժողովուրդը չգիտնալով թէ ինչպէ՛ս կրնայ այդ ցանկալի բաներուն տիրանալ՝ պատրաստ է փարելու ընդունելի երեւցած սեւէ բանի:

Ժողովուրդը կրնայ խիստ պատշաճօրէն «սուրբ տարի» մը պահել, այդ բաներուն ուղիղ նշանակութեանը համաձայն: Սակայն, տարի մը սուրբ չըլլար՝ մարդոց յայտարարութիւններովը կամ պատահական աղօթքներովը: Ծշմարտապէս սուրբ տարին այն է՝ որ ամբողջովին Եհովա Աստուծոյ եւ Անոր Թագաւորութեան նուիրուած է, ժողովուրդը դաստիարակելու եւ զանոնք Ս. Գրոց լոյսին առաջնորդելու համար:

Կրօնամոլներ դարերով շատերուն հաւատացուցած են թէ՛ երկրի վրայ եղած կարգ մը մարդիկ աստուածային իրաւասութեամբ է որ կ'իշխեն եւ թէ՛ այդ մարդիկ ինչ որ թելադրեն, ժողովուրդը ընդունելու է: Ասոր որպէս արդիւնք՝ շատեր տրդէտ մնացած են: Միլիոնաւորներ այնպէս կը հաւատան թէ 1933-ը «սուրբ տարի» մըն է, քանզի կրօնական առաջնորդներ զայն այդպէս յայտարարած են, եւ անոնց հօտերուն գլխաւորներն ալ այդ յայտարարութեան կողմնակից են: Ես նպատակ չունիմ կրօնականներն ու անոնց հօտերուն գլխաւորները համոզելու ջանալ թէ իրենք սխալ,

ինչու որ անոնք իրենց ականջները խցած են Աստուծոյ Ոսօքին ըսածներուն նկատմամբ: Ոմանք պիտի ըսեն թէ ես կրօնական առաջնորդները կը վարկարեկեմ եւ անողորմարար կը քննադատեմ, սակայն ուղիղ չէ ատիկա: Ես չեմ ասորժիր ունէ մարդ վարկարեկելէ: Ես անձնական թշնամութիւն չունիմ՝ ունէ մէկուն հանդէպ: Իմ նպատակս ու պարտականութիւնս է ժողովուրդին օգտին ու միխթարութեանը եւ Աստուծոյ անուանը փառքին համար ճշմարտութիւնը խօսիլ:

Շատ աւելի լաւ է որ բարեացակամ մարդիկ ներկայիս տեղեկանան ճշմարտութեան, քան թէ սուտ վկայութեան մը վրայ յօյս դնեն, եւ տարւոյն վերջաւորութեանն ալ իրենց այդ յօյսին խորտակուիլը տեսնեն: Միթէ աւելի լաւ չէ՞ որ ճշմարտութիւնը ժողովուրդին ներկայացուի լուրջ նկատառութեան համար, եւ ամէն մէկ անհատի պատեհութիւն ընծայուի անձնապէս վճռելու թէ ինք ինչ ճամբու պիտի հետեւի: Զիս չեն հետաքրքրեր այն մարդիկը՝ որոնք յանդգնութիւնը ունեցած են այս տարին «սուրբ» հռչակելու, բայց զիս կը հետաքրքրեն թէ պէ՞տք է թոյլ տալ որ ժողովուրդը խաբուի մարդոց յայտարարութիւններովը, թէ ոչ՝ ճշմարտութիւնը ներկայացնելով՝ անոնց պատեհութիւն ընծայելու է Աստուծոյ եւ Անոր Թագաւորութեան կողմը դերք բռնելու:

Ի՞նչ է ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ

Գրիստոս Յիսուս, մարդոց մէջ եղած ուսուցիչներուն ամենամեծը, ըսաւ Ս. Գրքին մասին, թէ ան Աստուծոյ Ոսօքն է, «Ինչ խօսքը ճշմարտութիւն է» (Յովհ. Ժ. 17): Ս. Գրոց հակառակ ունէ բան ստութիւն է: Այս տարի «սուրբ տարի» մը անւանող մեծապատիւները բոլոր մարդոց հրաւէր տրւած են աղօթելու Աստուծոյ «որ մեր բեռներէն ազատինք»: Եւ անոնք իրենց տուած այդ հրաւէրով կ'ընդունին թէ Աստուծոյ Ոսօքը ճշմարտութիւնն է: Ուստի՝ եթէ անոնք իրենց իրական շահը կը փրկատունն, պարտին Ս. Գրոց դիմել եւ հոն որպէս Աս-

տուծոյ կամքը յայտնուած խօսքով առաջնորդուիլ: Ս. Գիրքը դրուած էր ներկայ տաղնապալից ժամանակուան համար, ինչու որ անոր մէջ ըսուած է թէ ան գրուեցաւ այն մարդոց օգտին համար՝ որոնք աշխարհի վախճանին կը հասնին (Ա. կորնթ. Ժ. 11): Մենք աշխարհի վախճանին հասած ենք այժմ, եւ այս համար ներկայ ժամանակուան կ'ակնարկէ: Աստուծոյ Ոսօքը անաստողները եւ մարդոց, ըլլան ատոնք պապ, զանազան կղերականներ, դիւանագէտներ կամ դրամատէրներ, տուած խրատներուն հետեւողները սաստիկ յուսախարութեան ու վշտի պիտի ենթարկուին:

Միացեալ Նահանգաց ներկայ նախագահը՝ պաշտօնի վրայ հաստատուած ժամանակ խօսած էր ճառովը՝ Առակաց Իթ. գլուխին մէկ մասը մէջ բերաւ, ըսելով. «Առանց մարդարէութեան (տեսիլքի) ժողովուրդը կը խոտորի»: Եւ ըստ հանրային մամուլին տուած բացատրութեանը՝ ատիկա այն կը նշանակէ թէ ժողովուրդը պիտի կորսուի, եթէ այս աշխարհի քաղաքական, վաճառականական եւ կրօնական խնդիրներու մասին տեսիլք չունենայ: Ս. Գրոց այդ համարը այդ տեսակ նշանակութիւն չունի, եւ այս աշխարհին չվերաբերիր բնաւ: Համարը ամբողջութեամբ սապէս կը կարդացուի: «Առանց մարդարէութեան (կամ տեսիլքի) ժողովուրդը կը խոտորի, բայց օրէնքը պահող երջանիկ կ'ըլլայ» (Առակ. Իթ. 18): Տեսիլքը ե՛նչօրևէ Աստուծոյ եւ Անոր նպատակներուն մասին է, Անոր Թագաւորութեան միջոցաւ արտայայտուած, եւ մի միայն անոնք պիտի ազատին Արմաղեդոնէն՝ որոնք որ ներկայիս կը տեսնեն այս ճշմարտութիւնները: Ինչպէս որ Ս. Գիրքը կ'ըսէ՝ տեսիլք չունեցողները իրաւցնէ կը խոտորին. այդ պատճառաւ աւելի եւս կը շեշտուի Աստուծոյ եւ Անոր Թագաւորութեան մասին ժողովուրդին կողմէ. ճշմարտութիւնը լըսւելու կարեւորութիւնը: Նկատի առնելու ենք որ այս համարը ցոյց կու տայ թէ՛ երանելին այն է որ Աստուծոյ օրէնքը կը պահէ. եւ Աստուծոյ օրէնքը պահել կը նշանակէ Անոր եւ ոչ թէ մարդոց

ըսածը կատարել. Աստուծոյ օրէնքը կարենալ պահելու համար մարդիկ պարտին տեղեկութիւն ստանալ Անոր օրէնքին մասին: ԵՏՈՎԱԵԻ ՎԿԱՆԵՐԸ ներկայիս մեծ ճիգ կը թափեն ժողովուրդը դատարարակելու համար. մինչդեռ 1933-ը «սուրբ տարի» անուանողներն են որ կը ջանան ժողովուրդը տըզէտ պահել Աստուծոյ օրէնքին նկատմամբ:

Երկրիս արարածներուն առջեւ՝ ներկայիս երկու աստուածներ կան. մին է ճշմարիտ Աստուածը, իսկ միւսն է կեղծ կամ սուտ աստուածը: Ըճմարիտ եւ արդար Աստուծոյ անունն է ԵՏՈՎԱ: Մ. Գրոց կողմէ կեղծ կամ սուտ աստուծոյն տրուած անունն է Սատանայ, Օձ, Վիշապ, եւ Բանսարկու: Անոր օձ անունը խարոզ կը նշանակէ, որ իր ներկահայացուցիչներուն միջոցաւ երեւնալով ու յայտարարելով թէ ինք լուսոյ հրեշտակ մըն է՝ կը խաբէ զանոնք որ Աստուծոյ ճշմարտութեան Խօսքով չեն դատարարակուիր ու անոր վստահիր: Երբ կը յայտարարեմ թէ մարդիկ Սատանային է որ կը ծառայեն՝ եւ մարդիկը չեմ վարկարեկեր, այլ ընդհակառակը, լրջօրէն ցոյց կու տամ թէ մարդիկ կը խարուին Սատանային, որ բոլոր մարդոց թշնամին է: Ներքովի օրերէն եւ Սանարի դաշտին մէջ բարեկեանական աշտարակին շինուելէն իվեր՝ Սատանան մարդոց անունները բարձրացնել եւ ԵՏՈՎԱ Աստուծոյ ու Քրիստոս Յիսուսի անունները մէկ կողմ քշել տուած է: Ու ներկայիս ալ աշխարհի մէջ նոյն ուղղութեամբ է որ կ'ընթանան մարդիկ: Ապրիլ 2-ին (1933) Նիւ Եորքի մէջ տեղի ունեցած Սուրբ Ժամուան Պաշտամունքին (Հօլի Աուր Սըրվիս) հեռարձակումը մտիկ ընողներուդ՝ ամենայն քաղցրութեամբ ու անկեղծութեամբ կը յիշեցնեմ թէ՛ այդ պաշտամունքին մէջ մարդոց անունն էր որ բարձրացուեցաւ, մարդոց համար յաճախ դործածելով «Սուրբ Հայր», «Ձերին Գերապայծառութիւն» «Ձերին Վսեմութիւն», եւ այլն տիտղոսները, մինչդեռ ԵՏՈՎԱ Աստուծոյ ու Անոր Թագաւորին անուններն ու Թագաւորութիւնը բնաւ չյիշուեցան: Անոնք սեւէ խօսք չըրին Աստուծոյ այն բացայայտ

նպատակին մասին թէ՛ Նա իր Թագաւորութեան միջոցաւ է որ մարդկային ազգին հետ պիտի յարաբերի: Ամէն անոնք որ մարդոց մեծ պատիւ ու փառք ընծայելու այս ընթացքին կը փափաքին հետեւիլ՝ թո՛ղ հետեւին. սակայն ես կը յիշեցնեմ բարեացակամ մարդոց թէ՛ այդպիսի ընթացք մը զդուելի է ԵՏՈՎԱ Աստուծոյ, եւ ես ասիկա կ'ըսեմ որպէս զի դուք ԵՏՈՎԱՆ ու Անոր Թագաւորութիւնը մեծարէք եւ ոչ թէ մարդիկ: Յիսուս ըսաւ մարդ փառաւորողներուն. «Մարդոց մէջ բարձր եղածը Աստուծոյ առջեւ պիղծ է» (Ղուկ. ԺԶ. 15): Սատանան մարդիկ իր ծուղակին մէջ ձգած է՝ բարձրացնելով զանոնք իսկ անտես ընելով զԱստուած: Եւ նա ինչո՞ւ ըրած է այդ բանը: Անոր համար որ Սատանային քաղաքականութիւնն է մարդիկ հեռացնել ճշմարիտ Աստուծմէն, ու շողջորթութեան նենգաւոր մեթոտը կը դործածէ իր անօրէն նպատակը իրագործելու համար: Մոռնալու չենք թէ Սատանան երկար ատեն առաջ ԵՏՈՎԱ Աստուծոյ առջեւ յիսորտալով յայտարարեց թէ՛ Նա չէր կրնար աշխարհի վրայ դնել մարդիկ որոնք պիտի կրնան առ Աստուած ունեցած իրենց հաւատարմութիւնը պահել: Եթէ ամէնն ալ ըմբռնած ըլլային թէ Բանսարկուն մարդուն թշնամին է՝ շատ քիչերն են որ անոր ծուղակին մէջ իյնալու են ինքնակայ պիտի ըլլային: Բազմաթիւ անձինք՝ Աստուծոյ եւ Անոր Թագաւորութեան մասին գիտութիւն կամ տեսիլք չու-



ներնալնուն համար Սատանային նենդաւոր ծուղակին մէջ կ'իյնան ու կը խոտորին:

Պաղաղութիւնն ու բարդաւաճութիւնն բերելու համար այս տարին (1933-ը) «սուրբ տարի» յայտարարելը՝ Ամենակալ Աստուծոյ առջեւ ամբարտաւան մեղք մըն է: Եհովան ունէ մարդու կամ խմբակի պաշտօն տուած չէ որ Իր գործը վարեն եւ «ժամեր ու օրէնքներ» փոխեն, եւ այդպէս այլ յայտարարուած է Դանիէլի Ե. 25-րդ համարին մէջ: Ունէ մարդ զօրութիւն եւ իշխանութիւն չունի ոսկիէ մուրճ կամ ուրիշ գործիք մ'առնելով դուռ մը կտարելու եւ բանալու (ինչպէս որ Կաթողիկ Եկեղեցւոյ ներկայ Պապը, Պիոս ԺԱ. բբաւ, 1933, Ապրիլ 2-ին) եւ ըսելու ժողովուրդին. «Ասիկա Տիրոջ օրհնութեանց մէջ մտնելու խորհրդանշան է»: Ամէն անոնք որ այսպիսի առաջնորդի մը կը հաւատան կամ կը հետեւին՝ միութեան մէջ է որ կը քալեն: Ունէ մարդ կամ խմբակ չկրնար ունէ տարի սուրբ ընել, լով «սուրբ տարի» յայտարարելով: Ներկայ տարին «սուրբ» յայտարարելը հակառակ է Աստուծոյ Սօսքին ու կամքին, հետեւաբար խաղաղութիւններն ու բարդաւաճութիւնը պիտի չզան որպէս պատասխան անոնց աղօթքին՝ որոնք «սուրբ տարին» հաստատեցին իրենց նպատակին իրագործմանը համար: Այսպիսի ամբարտաւան գործեր ընողներուն Եհովան կ'ըսէ Եսայեայ ԾԵ. 8-ին մէջ. «Իմ խորհուրդներս ձեր խորհուրդները չեն, ու ձեր ճամբաները (ներկայ տարին սուրբ յայտարարելու) իմ ճամբաներս չեն»: Աստուած մարդոց առաջնորդութեանը չհետեւիր:

Ո՛չ «եկեղեցի» կամ «տաճար» կոչուած նշանաւոր շէնքեր այցելելով, ո՛չ գերեզմանատուներ կամ մատուցատուներ (Հոովմ կամ Երուսաղէմ) ուխտի երթալով, ո՛չ մարդոց առջեւ երկրպագութիւն ընելով (Պապին ոտքին մեծ մատր համբուրելով) կամ ապաշխարանքի արտաքին ձեւակերպութիւններէ անցնելով, եւ ո՛չ այլ եկեղեցական կաղմակերպութեան մը մէջ մարդիկ բարձր աստիճաններու բարձրացնելով, կարելի է տարին սուրբ ընել կամ

սրբութեան տիրանալ: Աստուծոյ Սօսքը ասոնց ճիշդ հակառակը կ'ըսէ. «Բարձրացուցէք Եհովան, մեր Աստուածը, ու երկրպագութիւն ըրէք անոր ոտքերուն պատուանդանին. անիկա սուրբ է» (Սաղմոսաց ԴԹ. 5, տես Ամերիկ. Վերաքն. Թարգմ.): Աւելի եւս՝ մարդիկ բարձրացնելու մասին Յիսուս ըսաւ. «Երկրի վրայ մարդ ձեզի Հայր մի կոչէք, վասն զի ձեր Հայրը մէկ է, որ երկինքն է» (Մատթէոսի ԻԳ. 9): Այժմ ժողովուրդին կը մնայ վրձնել թէ՛ իրենք մարդոց խօսքերուն պիտի հետեւին թէ՛ ոչ Եհովա Աստուծոյ պատուէրին պիտի հնազանդին:

Այժմ՝ մենք վերջին օրերուն մէջ է որ կ'ապրինք, ինչու որ հասած է ժամանակը երբ Սատանային կազմակերպութիւնը շուտով պիտի կործանի Աստուծոյ բանակին մեծ Սպարապետին, Բրիստոսի, արշաւանքին առջեւ: Ներկայիս ձեր տեսած վիճակները իսկական իրականացումն են այն մարդարութիւններուն՝ որոնք վաղուց Ս. Գրոց մէջ արձանագրուած էին աշխարհի վախճանին կամ վերջին օրերուն մասին: Ես ատոնց՝ եւ աշխարհիս երեւելի մարդոց ամբարտաւան արարքներուն վրայ ուշադրութիւն կը հրաւիրեմ ոչ թէ՛ զանոնք ծաղր ու ծանակ ընելու՝ հաղա այն բարեացակամ մարդոց օգտին՝ համար՝ որոնք կը փափաքին ուղիղ ճամբուն մասին տեղեկանալ: Կարգ մը մարդիկ իբրարու քով գալով ներկայ տարին «սուրբ տարի» հռչակելը եւ այդ առթիւ մասնաւոր պաշտամունք կատարելը հակառակ է Աստուծոյ կամքին: Տէրը այդպիսիներուն մասին խօսեցաւ սա բառերով. «Չայս գիտցիր որ վերջին օրերը չար ժամանակներ պիտի գան. վասն զի մարդիկ պիտի ըլլան անձնասէր, արծաթասէր, ամբարտաւան, հպարտ, հայհոյիչ, ծնողներու անհնազանդ, ապերախտ, անսուրբ, . . . որոնք աստուածապաշտութեան կերպարանքը ունին, բայց անոր զօրութիւնը ուրացած են. եւ դուն անոնցմէ մէկդի կեցիր» (Բ. Տիմ. Գ. 1, 2, 5): Ժողովուրդը ներկայիս կամ Աստուծոյ կաղմակերպութեան եւ կամ Սատանային կաղմակեր-

պուժեան կողմը դիրք կը բռնեն: Թող ամէն ոք ազատ զգայ իր ուղած ճամբան ընտրելու. սակայն ի մտի ունենալու ենք թէ Արմաղեղոնի Պատերազմին ատեն մի միայն անոնք պիտի պաշտպանուին՝ որոնք անխախտ ու անկեղծ հաւատքով Նհովա Աստուծոյ կողմը կ'անցնին եւ ապա Անոր Խօսքով կ'առաջնորդուին:

Թերեւս ըսուի թէ՛ Կաթողիկ կաղմակերպութիւնը իրեն գլուխ ունենալով հօր քահանայապետը (Պապը), բողոքական կաղմակերպութեանց բազմաթիւ բաժանումները՝ իրենց գլուխ ունենալով իմաստուն ու պերճաբան կղերականութիւնը, Հրեաները իրենց առաջնորդ ունենալով փրկիսօրիայ բարբրները, եւ ամբողջը միասնաբար, իրենց նեցուկ ունենալով ճարպիկ դիւանագէտներն ու հսկայ վաճառականները, Աստուծոյ գահին առջեւ այնպիսի պատկառելի տեսարան մը պիտի պարզեն՝ որ Նա իսկ լսելով անոնց աղօթքները՝ իրենց բեռներէն պիտի ազատէ զիրենք ու աւելի անդորրութիւն եւ հանդստութիւն պիտի պարգեւէ: Հարցը այն է թէ՛ միթէ՛ Նհովա Աստուած պիտի լսէ ու կատարէ՞ այդպիսի պիղծ դաշնակցութեան մը աղօթքները: Ըստ Ս. Գրոց, Աստուած կը պատասխանէ, Ո՛չ:

Ս. Գիրքը կը յայտարարէ թէ մարդիկ բոլորն ալ բնութեամբ անարդար են եւ թէ արդարութեան կարելի է տիրանալ մի միայն հաւատալով եւ հնազանդելով Նհովայի, հաւատք ունենալով նաեւ Քրիստոս Յիսուսի եւ Անոր թափած արեան վրայ՝ որպէս մարդուն փրկագինը: Նհովայի պէտք է աղօթել Քրիստոս Յիսուսի անունովը, ինչու որ ահա այդպէս պատուիրած է Աստուած: Հրեայ կղերներուն ամէնն ալ բոլորովին կը մերժեն Յիսուս Քրիստոսը որպէս մարդուն փրկագին: Բոլոր արդիական կղերները նմանապէս կը մերժեն զԱնիկա ու Անոր արիւնը, եւ վերոյիշեալ դասակարգերուն ամբողջ խառնուրդը կը մերժէ այն կարգադրութիւնը զոր Նհովա Աստուած ըրած է Քրիստոս Յիսուսի եւ Անոր թաղաւորութեան միջոցաւ երկրիս բոլոր ազգերը խաղաղութեամբ ու բարգաւաճութեամբ օրհ-

նելու համար, եւ ասոր հակառակ՝ անոնք իրենց հաւատարմութիւնը յայտնած են Ազգերու Ընկերակցութեան, որ Սատանային մէկ արտադրութիւնն է: Այդ ամբողջ խառնուրդը ներկայ աշխարհի իշխող ուժը կը կազմէ, եւ ատոնց մասին գրուած է թէ բոլոր աշխարհ չարին, Սատանային, մէջ է (Ս. Յովհ. Ե. 19): Արդ՝ Աստուծոյ Խօսքը ի՞նչ կ'ըսէ՞ չարին ու անոր կաղմակերպութեան հաւատարմութիւն ընողներուն եւ աշխարհի մաս կաղմեւում Աստուծոյ թշնամիները եղողներուն աղօթքները լսելուն մասին: Միթէ անոնց աղօթքը բարգաւաճութիւն ու խաղաղութիւն պիտի բերէ՞ ներկայ «սուրբ» կոչուած տարւոյն տեւողութեան: Ս. Գրոց հետեւեալ համարները այս կէտը վեր կ'առնեն վճռական կերպով. «Տէրը ամբարիշտներէն հեռու է. բայց արդարներուն աղօթքը կը լսէ»: «Ան որ օրէնքը մտիկ ընելէն ետ կը դարձնէ իր ականջը, անոր աղօթքը անգամ պիղծ է»: «Վասն զի Տիրոջը անջբը արդարներուն վրայ են, ու իր ականջները՝ անոնց աղօթքին. բայց Տիրոջը երեսը չարագործներուն դէմ է» (Առակ. ԺԵ. 29, ԻԸ. 9, Ա. Պետ. Գ. 12): Ներկայ «սուրբ» կոչուած տարւոյն տեւողութեան՝ խաղաղութեան ու բարգաւաճութեան համար մատուցուած բոլոր աղօթքները անպատասխանի պիտի մնան, ինչու որ Աստուծոյ Խօսքը կը յայտարարէ թէ՛ մինչեւ որ երկիրը իր բռնակալ Սատանային ու անոր ամբարիշտ կաղմակերպութիւններէն չազատի՝ տեւական խաղաղութիւն ու բարգաւաճութիւն պիտի չզայ: Խիստ կարեւոր է որ մարդիկ տեղեկանան այս իրողութեան, որպէս զի կարող ըլլան իրենց հետեւելիք ճամբան ընտրել:

Երկար ատեն առաջ՝ Նհովան Հրեաները որպէս իրեն ժողովուրդ ընտրեց, զանոնք Երուսաղէմի մէջ հաստատեց, եւ իր սուրբ անունը անոնց վրայ դրաւ: Սատանան նենդութեամբ ու խաբէութեամբ Հրեաները հեռացուց իրենց ըրած ուխտէն եւ կոտորեց իրենց միջոց: Աստուած կրկին ու կրկին անգամներ աղաբարեց անոնց թէ զիրենք պիտի պատ-

ժէր, ու պատժեց զանոնք: Հրեայազգը «Քրիստոնեայ Աշխարհ»-ին մէկ նախապատկերն էր:

Քրիստոս Յիսուսի ու Անոր առաքեալներուն միջոցաւ երկրիս վրայ հաստատուեցաւ Նհովյա Աստուծոյ ճշմարիտ երկրպագութիւնը, որ պատշաճօրէն ճշմարիտ քրիստոնէութիւն կը կոչուի: Քիչ վերջ «Քրիստոնէութիւն» կամ «Քրիստոնեայ Աշխարհ» կոչուած խոշոր կաղմակերպութիւն մը առաջ եկաւ եւ յետոյ Սատանային դործիք դարձաւ: Ծատ մը ազգեր ներկայիս իրենք զիրենք «Քրիստոնեայ» կը կոչեն, բայց նոյն ատեն Սատանային առաջնորդութեանը կը հետեւին: Ա. Կորնթ. Ժ. 11-ին մէջ գրուած է. «Բայց այս ամէն բաները իբրեւ օրինակ կը պատահէին անոնց (Հրեաներուն). իսկ մեզի, որոնց դարերուն վերջը հասաւ, խրատ ըլլալու համար գրուեցան»: Հրէից վրայ եկած ու Երեմիայի ու Եղեկիէլի մարգարէութիւններով արձանագրուած բաները «Քրիստոնեայ Աշխարհ»-ին կը պատշաճին մասնաւորապէս ներկայիս: Ատոնց մէկ մասը ձեր ուշադրութեան կը յանձնեմ:

Հրէից վերջին թագաւորը, Սեղեկիա, եւ անոր պաշտօնական ընկերակիցները Երուսաղէմի մէջ «սուրբ տարի» հռչակեցին եւ ժողովուրդին հաւատացուցին թէ՛ իրենք խաղաղութիւն, բարգաւաճութիւն ու ազատութիւն պիտի ունենային, եւ ապա այդ պարագան որպէս միջոց դորձածեցին ժողովուրդը աւելի եւս հպատակեցնելու եւ ստրկացնելու համար: Յետոյ Նհովյա Աստուած յայտարարեց իշխաններուն թէ՛ իրենց կեղծաւորութեանը ու նենգաւորութեանը պատճառաւ Իր դահիճը (Էֆսէֆիւշընը) պիտի զրկէր ու Երուսաղէմը պիտի կործանէր, եւ շատ չանցած Երուսաղէմ գետնին հաւասարեցաւ (Երեմ. 17. 8--22): «Քրիստոնեայ Աշխարհ»-ի ազգերը Երուսաղէմի հակառակին (Էֆսիփ) են, ինչու որ այդպէս կը յայտարարէ Ա. Գիրքը: Այժմ Կաթոլիկները, Բողոքականները, Հրեաները ու անոնց հօտերուն զխաւորները դաշնակցութիւն կը կազմեն, որոնց որոշ կերպով յայտարարած նպատակն է իրենց մարդկային յաւակ-

նոտ ջանքերով ժողովուրդին խաղաղութիւն, բարգաւաճութիւն, ազատութիւն եւ ցաւերէ հանդրստութիւն ընծայել: Այդ բանը իրականացնելիք ժամանակին, անոնք «սուրբ տարի» անունը կու տան: Անոնց իրական նպատակն է ջանալ ժողովուրդը ատեն մը հանդարտ պահել՝ անոնց ապագայ լաւագոյն ժամանակի մը յօյր տալով: Անոնց ծրարները բացորոշապէս կեղծաւորական է: Անոնց ղեկավարներուն մէջ գտնուող Կաթոլիկները՝ Բողոքականներուն վրայ վստահութիւն չունին, Բողոքականներն ալ վստահութիւն չունին Կաթոլիկներուն վրայ, իսկ Հրեաները ո՛չ Կաթոլիկներուն եւ ոչ ալ Բողոքականներուն վրայ վստահութիւն ունին. եւ դիւանագէտներն ու մեծ վաճառականները գիտեն թէ անկեղծութիւն չկայ այդ ամբողջ խումբին մէջ: Անոնց «սուրբ տարի» կոչածը՝ տառապող ժողովուրդին ո՛չ հանդատութիւն, ո՛չ խաղաղութիւն եւ ոչ ալ բարգաւաճութիւն պիտի բերէ: Ընդհակառակը՝ տարւոյն վերջաւորութեան ժողովուրդը ներկայինէն ալ աւելի մեծ անձկութեան ու տաղնապի մէջ պիտի ըլլայ:

Երեմիայի մարգարէութեան 11. գլուխին մէջ աչքառու կերպով ցոյց տրուած է դարձեալ թէ՛ զիչ ատենէն «Քրիստոնեայ Աշխարհ»-ին ի՛նչ պիտի պատահի: Երուսաղէմ, Աստուծոյ անհաւատարիմ ըլլալով, կը պատկերացնէր մեր օրուան կեղծաւոր «Քրիստոնեայ Աշխարհ»-ը: Եզիպտոսի Փարաւոն թագաւորն ու անոր բանակը պատկերացուցին Սատանան ու անոր ուղղակի ուժերը, որոնք ներկայիս «Քրիստոնեայ Աշխարհ»-ի օգնութիւն ընծայելու հետամուտ են: Հոն յիշուած Բաղդէացիները կը պատկերացնեն «Քրիստոնեայ Աշխարհ»-ը ոչնչացնելու համար Նհովյաի կողմէն զրկուած Դահիճը: Նհովյա Աստուած Իր Երեմիա մարգարէն զրկեց Երուսաղէմի իշխաններուն ու ժողովուրդին ազդարարելու թէ՛ Բաղդէացիները դարձեալ պիտի դային ու քաղաքը կործանէին իբրեւ Իր դահիճը: Հրեայ կղերները, բարբիները, որոնք այն ատեն կը յայտարարէին թէ իրենք սուրբեր ու ժողովուրդին

պատգամախօսներն են, ըսին թէ վախի պատճառ
չկար եւ ջանացին ժողովուրդը արգիլել Աստուծոյ
մարգարէին մտիկ ընելէ: Ժողովուրդը տարակոյսի
մատնուած էր իբ ընելիքին մասին: Յետոյ Աստու-
ած Երեմիայի սա մարգարէական խօսքերը արտա-
սանել տուաւ Հրեաներուն նկատմամբ. «Տէրը այս-
պէս կ'ըսէ. Մի խաբէք ձեր անձերը՝ ըսելով թէ
Քաղղէացիք անշուշտ մեղով պիտի երթան, վասն
զի պիտի չերթան» (Երեմ. 1. 9): Աստուծոյ
դահիճը ետ դարձաւ ու կործանեց Երուսաղէմ քա-
ղաքը: Երեմիա Աստուծոմէ առաջնորդուած՝ Երու-
սաղէմի ժողովուրդին սա խօսքերը ուղղեց անոնց
նկատմամբ՝ որոնք ստութեամբ խաղաղութիւն կը
մարգարէանային ու ժողովուրդը կը խաբէին.
«Վասնզի անոնց պղտիկէն մինչեւ մեծը ամէնը ա-
զահութեան ետեւէ եղան, ու մարգարէէն մինչեւ
քահանան ամէնը ստութեամբ կը վարուին: . . . Խա-
ղաղութիւն, խաղաղութիւն է՝ կ'ըսեն, երբ խա-
ղաղութիւն չկայ» (Երեմ. 2. 13, 14): Ճիշդ այդ
միեւնոյն բանը ներկայիս տեղի կ'ունենայ «Քրիստոնեայ
Աշխարհ»-ի մէջ, որուն ղեկավարները ներ-
կայ տարին «սուրբ» հռչակած են եւ կը ջանան ժո-
ղովուրդը արգիլել Աստուծոյ ճշմարտութեան Խօս-
քը լսելէ:

Եհովա Աստուած «Քրիստոնեայ Աշխարհ»-ի
խաղաղութիւն ու բարդաւանճութիւն պիտի չըզկէ՝
որքան ատեն որ վաճառականական ու դիւանադի-
տական կեղեքիչ ուժերու անսուրբ դաշնակցութիւ-
նը, կեղծաւորական կրօնքի հետ միասին, կը շա-
րունակէ գոյութիւն ունենալ: Խաղաղութեան ու
բարդաւանճութեան համար անոնց ըրած աղօթքները
ծաղրանք են միայն. եւ «Աստուած ծաղր չըլլար»:
Այս աղօթողները եւ ուրիշ շատեր պիտի խաբուին,
սակայն Աստուած տեղեակ է անոնց բուրբին ալ
սրտին մէջ եղածներուն: Այդ անսուրբ դաշնակցու-
թեան պատգամախօսները կը շարունակեն «խաղա-
ղութիւն, խաղաղութիւն» աղաղակել, երբ միեւնոյն
ատեն այդ ազգերուն ամէն մէկը անդադար ժողո-
վուրդին բեռները կը ծանրացնէ պատերազմի պատ-

րաստութեան համար: Սատանան ու անոր կազմա-
կերպութիւնը, ինչպէս որ Յայտնութեան մէջ յիշ-
ւած երեք գորտերով պատկերացուած են, շարունա-
կաբար կը կռնչեն, կը մեծաբանեն ու կ'աղմկեն
եւ աղբերը կը համախմբեն Ամենակալ Աստուծոյ
մեծ օրուան պատերազմին համար, երբ «Քրիստոնե-
այ Աշխարհ»-ը պիտի տապալի-- Յայտնութեան
Ժ. 2. 13--16:

Խաղաղութիւն ու արդարութիւն չեն կրնար
հաստատուել ներկայ անարգար աշխարհին մէջ,
ինչու որ Եհովան վճռած է կործանել զայն: Ատոր
մասին Նա առատ ապացոյց ընծայած է Եղեկիէլի
ու Երեմիայի մարգարէութիւններով: Որպէս փաստ
ուրիշ օրինակ մը մէջ կը բերեմ այժմ: Աստուծոյ
ուխտեալ ժողովուրդը Իսրայէլ, իր անհաւատարիմ
թագաւորին իշխանութեան օրով՝ Եհովայի ծառա-
յելու մակերեսային յայտարարութեանց հետ խառ-
նեց քաղաքականութիւն ու կեղծ կրօնք: Ատոր ճշ-
գրիտ նմանութիւնը ներկայիս գոյութիւն ունի
«Քրիստոնեայ Աշխարհ»-ին մէջ, որուն ղեկավար-
ները այնպէս կը յայտարարեն թէ այս ազգերը
Քրիստոնեայ են, եւ սակայն՝ անոնց ամէնն ալ
քաղաքականութիւն (փալլքիքս) կը խառնեն զԱստ-
ւած պաշտելու իրենց արտաքին յայտարարութեանց
հետ: Անոնք կ'աշխատին ամէն կրօնք, նոյն իսկ
Քրիստոսը ու Անոր արիւնը ուրացողները, մէկ
կարգազրութեան տակ բերել ու միացնել, եւ կ'ա-
կընկալեն որ Աստուած իրենց աղօթքները լսէ: Ե-
հովան Իր մարգարէները զրկեց Իսրայէլացիները
ազգարարելու համար, սակայն անոնք անտես ըրին
այդ ազգարարութիւնը: Յետոյ Եհովան Յէուն զըր-
կեց, իբրեւ դահիճ այդ անհաւատարիմ ժողովուր-
դին նկատմամբ Իր դատաստաններն ի գործ դնելու
համար: Այդ բանին մէջ Յէու նախապատկերն էր
Քրիստոս Յիսուսի, զոր Աստուած ներկայիս պիտի
գործածէ «Քրիստոնեայ Աշխարհ»-ի դէմ Իր դա-
տաստաններուն որպէս գործադրիչը կամ դահիճը:
Յէու փութով առաջ անցաւ իր պարտականութիւնը
կատարելու. Իսրայէլի Յովրամ թագաւորը զանի-

կա դիմաւորեց ու հարցուց՝ «Ով Յէու, խղարղութիւն է» . ու Յէու պատասխանեց, «Ի՞նչպէս խղարղութիւն կ'ըլլայ, քանի որ քու մօրդ Յեղարէլի պոռնիկութիւնները ու կախարղութիւնները կը շատնան» (Դ. Թագ. Թ. 17--22) : Այժմ Տէրը աղբարարիչներ կը դրկէ «Քրիստոնեայ Աշխարհ»-ի իշխաններուն, ու անոնք կ'անտեսեն Անոր աղբարարութիւնը եւ կը մերժեն Անոր Թագաւորը : Մեծագոյն Յէուն, Քրիստոս Յիսուս, Իր բանակովը դէպի Արմազեդոնի պատերազմը կը յառաջանայ՝ Եհովայի վրէժխնդրութիւնը ի գործ դնելու համար՝ Անոր բոլոր թշնամիներուն դէմ : «Քրիստոնեայ Աշխարհ»-ի անսուրբ դաշնակցութիւնը կ'աղաղակէ . «Մեզի խղարղութիւն ու բարգաւաճութիւն պարգեւէ», եւ մեծ Դահիճը՝ Քրիստոս Յիսուս կը պատասխանէ . «Ի՞նչ, խղարղութիւն, երբ ձեր մէջ այնքան կեղծաւորութիւն, քաղաքականացած (փալիթիքը) կրօնք եւ սատանայական պաշտամունք գոյութիւն ունին» :

Այն ատեն Յէու հրամայեց որ սատանայական պաշտամունքի ձեռնառու եղող մարդիկը իրենց գոյնը ցոյց տան, ու յետոյ Յովնադարի, որ մեր օրուան բարեադարձ եւ օրինապահ ժողովուրդը պատկերացուց, ներկայութեանը Յէու սպաննեց բոլոր կեղծ կրօնապաշտները եւ Աստուծոյ սուրբ անունը նախատողները-- Դ. Թագ. Ժ. 15--25 :

Ս. Գիրքը կը յայտարարէ թէ՛ այս անսուրբ դաշնակցութիւնը կազմողները եւ ներկայ տարին «սուրբ» յայտարարողները իրենց բուն նպատակը պիտի քօղարկեն, յանդգնօրէն յառաջ պիտի անցնին, ու պիտի ծանուցանեն ժողովուրդին թէ՛ իրենք իրապէս խղարղութիւն ու ապահովութիւն բերած են . բայց նկատի առնենք թէ Տէրը ի՞նչ կ'ըսէ . «Երբ բսելու ըլլան թէ խղարղութիւն ու ապահովութիւն է, այն ատեն կորուստը յանկարծակի անոնց վրայ պիտի հասնի յղիին երկունքին պէս, ու պիտի չազատին»-- Ա. Թեոք. Ե. 3 :

Կեղծ կրօնքի, վաճառականութեան եւ դիւանադիտութեան առաջնակարգ մարդոց միացեալ ջանքերը կարող չեն «Քրիստոնեայ Աշխարհ»-ի խա-

ղարղութիւն եւ բարգաւաճութիւն բերելու, ինչու որ Աստուծոյ ժամանակը եկած չէ եւ Աստուած պիտի չլսէ անոնց աղօթքները : Աստուծոյ Սօսքին մէջ դրուած է . «Ամէն բանին ատենը կայ, ու երկինքի տակ եղող ամէն գործին ժամանակը . . . պատերազմի ժամանակ ու խղարղութեան ժամանակ» (Ժող. Գ. 1, 8) : Եհովա Աստուծոյ պատերազմ մղելու ժամանակը մօտեցած է : Թերեւս ան այս տարի տեղի չունենայ, սակայն շատ պիտի չուշանայ, եւ ո՛չ մէկ արարածի կողմէ թափուած ոեւէ ջանք կըրնայ արգիլել զայն, ինչու որ Աստուած Իր նպատակը չփոխեր : Մինչեւ հիմա՝ երկրիս ժողովուրդներուն նեղութիւնները վերցնելու համար թափուած ջանքերուն՝ Աստուած ոեւէ կերպով միջամուխ չէ եղած . սակայն նա կը յայտարարէ թէ ինք Արմազեդոնի ժամանակ ոտքի պիտի ելլէ ու «Քրիստոնեայ Աշխարհ»-ի աղբերը հարուածելով զետնին պիտի հաւասարեցնէ, որոնք պիտի կործանին ու ա՛լ ամենեւին պիտի չկանգնին :

Ըստ հանրային մամուլին տուած տեղեկութեան՝ Հոռովի քահանայապետը (Պապը) ըսած է թէ խաբէրի ժողովուրդներուն ներկայիս ունեցած նեղութիւններն ու տաղանապը իբր պատիժ դրկուած են Աստուծմէ, քանզի անոնք (ժողովուրդը) եկեղեցիին հաւատարիմ չեն եղած . ու այժմ նա (Պապը) ու իր ընկերակիցները (յարանուանական եւ քաղաքական) աշխարհի խղարղութեանն ու բարգաւաճութեանը համար կ'աղօթեն : Աստուած ամենեւին պատասխանատու չէ ժողովուրդին ունեցած ներկայ տառապանքներուն համար : Յայտ. ԺԲ. 12-ին մէջ որոշապէս ըսուած է թէ՛ Բանասրկու Սատանան է որ այս թշուառութիւնն ու տառապանքը բերած է աշխարհիս ժողովուրդներուն վրայ : Աստուած կը յայտարարէ թէ՛ ինք մօտ ատենէն Արմազեդոնի պատերազմին մէջ պիտի տապալէ Սատանան ու բոլոր անոնք որ անոր կազմակերպութեան տեսանելի ու անտեսանելի մասերը կը կազմեն :

Անգութ վաճառականները, անիրաւ քաղաքագէտները եւ հաւատուրաց եկեղեցականները ձեռք

ձեռքի տուած են: Այդ անսուրբ դաշնակցութիւնն է որ իր իշխանութեան տակ առած է աշխարհի ոսկին եւ ուրիշ հարստութիւնները, ու իբրեւ Սատանային գործիքը՝ ժողովուրդը հարստահարած է, ու այդ հարստահարութեանց պատճառաւ է որ ժողովուրդը ներկայիս կ'աղաղակէ: Այդ կեղծաւոր դաշնակցութիւնը խաղաղութեան ու բարգաւաճութեան համար կ'աղօթէ, եւ Եհովան կ'ըսէ անոնց. «Ձեր ոսկին ու արծաթը ժանդոտած է, եւ անոնց ժանդը ձեզի դէմ վկայ պիտի ըլլայ, ու ձեր մարմինը պիտի ուտէ կրակի պէս. վերջին օրերուն համար դանձ զիզեցիք: Ահա ձեր արտերը հնձող բանուորներուն վարձքը զոր ետ պահեցիք՝ կ'աղաղակէ, ու հնձողներուն բողբոջը զօրութեանց Տիրոջը ահանջներուն հասաւ: Երկրի վրայ փափկութեամբ ու հեշտութեամբ ապրեցաք, սիրտերնիդ սնուցիք՝ որ պէս թէ մորթուելու օրուան համար» (Յակոբու Ե. 3--5): Եհովան փոխանակ բարեացակամ մարդոց պատուէր տալու որ այդ անսուրբ դաշնակցութեան միանան ու անկէ առաջնորդուին՝ Նա կ'ըսէ անոնց. «Ուրեմն ինձի սպասեցէք, ... քանզի բոլոր երկիրը իմ նախանձիս կրակովը պիտի սպառի: Վասնզի այն ժամանակ ժողովուրդներուն մաքուր լեզու մը պիտի դարձնեմ, որպէս զի ամէնը Տիրոջը անունը կանչեն, ու մէկ սրտով անոր ծառայութիւն ընեն»-- Սոփ. Գ. 8, 9, տես անդրերէն Ս. Գիրքը:

Եհովա Աստուած այն խոստումը ըրաւ թէ՛ Քրիստոս Յիսուս իբրեւ Յաղթական Թագաւոր՝ Իր արեամբ մարդը պիտի փրկէ եւ ապա Բարձրելոյն անունը ջատագովէ: Յիսուս 1900 տարի առաջ երկրիս վրայ եղած ատեն՝ այս մարգարէութիւններուն մէկ մասը փոքր աստիճանով մը կատարեց, եւ այժմ Նա եկած է դանոնք կատարելապէս ի գործ դնելու: Երբ ժամանակը հասաւ որ մարդ Յիսուսը Ինքզինքը Հրէից ընծայէ իբրեւ անոնց Թագաւորն ու Օծեալը՝ Նա իր ձեռքը ոսկիէ մուրճ մը շառաւ (ինչպէս որ Պապը ըրաւ) եւ արծաթէ փողեր Անոր դալը չճանուցին. հապա Նա եկաւ հեղութեամբ ու խոնարհութեամբ, աւանակի վրայ հեծած, Եհովա

Աստուծոյ անունը փառաւորելով: Այդ օրուան կղերները զԱնիկա մերժեցին եւ Նա յայտարարեց թէ իբրեց տունը աւերակ պիտի մնար (Մատթէոսի ԻԱ. 1--43): Եհովան՝ Քրիստոս Յիսուսը աշխարհի Թագաւոր կարգած ըլլալով՝ 1918-ին Նա զԱնիկա «Քրիստոնեայ Աշխարհ»-ին ներկայացուց եւ մարգարէութիւններէն ու չօգտիելի իրողութիւններէն առատ ապացոյց ընծայեց թէ իր Թագաւորին դատելու եւ իշխելու ժամանակը հասած էր, եւ «Քրիստոնեայ Աշխարհ»-ի կղերներն էին որ առաջ անցնելով Քրիստոսը եւ Անոր Թագաւորութիւնը մերժեցին ու անոր տեղ Ազգերու Ընկերակցութիւնը ընդունեցին. եւ ներկայիս, Եհովայի տաճարին մէջ, Նա «Քրիստոնեայ Աշխարհ»-ի կործանման վճիռը կը ծանուցանէ: Այսպէս կը տեսնենք որ Երուսաղէմն ու «Քրիստոնեայ Աշխարհ»-ը համանման փորձառութիւններ կ'ունենան: Եհովան ճիշդ ներկայ ժամանակուան մասին կ'ըսէ. «Տէրը իր սուրբ տաճարին մէջ է. Տիրոջը աթոռը երկինքն է. անոր աչքերը կը տեսնեն. անոր Թարթիչները կը քննեն մարդոց որդիները: Տէրը կը քննէ արդարը. բայց անոր անձը կ'ատէ ամբարիշտը ու բռնութիւն սիրողը: Ամբարիշտներուն վրայ պիտի տեղան որոգայթներ, հուր եւ ծծումբ ու խորշակ. այս պիտի ըլլայ անոնց բաժակին բաժինը»-- Սաղմոսաց ԺԱ. 4--6:

Եհովայի սուրբ եւ արդարադատ կազմակերպութիւնը կը կոչուի նաեւ Անոր տաճարը, որուն գլուխը դրած է Քրիստոս Յիսուս: Եհովան՝ Քրիստոսը ամէն բաներու դատաւորը ըրած է եւ Անոր իշխանութիւն տուած է դատաստան ի գործ դնելու (Մաղաքեայ Գ. 1--4, Յովհ. Ե. 22--27): Այժմ Եհովան կը խօսի իր անունը կրող ազգաց ժողովուրդներուն եւ կ'ըսէ. «Տէրը իր սուրբ տաճարին մէջ է. անոր երեսին առջեւ լուռ կեցիք, ով բոլոր երկիրը»-- Ամբակումայ Բ. 20:

Ազգերու ղեկավարները փոխանակ Աստուծոյ Ծօռքին ուշադրութիւն ընծայելով ժողովուրդը յորդորելու որ Անոր պատուէրներուն հետեւին, իբրեւ խումբ մը եսասէր մարդիկ, անոնք վճռած են աշ-

խարհը իրենց ուղած կերպովը կառավարել: Անոնք ամբարտաւանորէն ներկայ տարին «սուրբ» կը հռչակեն (որուն մասնակցեցան նաեւ հայ եկեղեցիները-- տես «Հայաստանի Կոչնակ»-ին 1933, Յուլիս 1 թիւին էջ 613-ը, նաեւ «Փարոս Հայաստանեայց»-ի 1933, Յունիս-Յուլիս թիւը) եւ հրաւէր կը կարգան ժողովուրդներուն որ իրենց հետեւին, մինչ իրենք կը ջանան ձիւղ Աստուծոյ Խօսքին հակառակ կերպով՝ աշխարհի վրայ խաղաղութիւն ու բարգաւաճութիւն հաստատել: Անոնք Եհովա Աստուծոյ ու Անոր Թագաւորութեան յարգ ու պատիւ չեն ընծայեր, հապա մարդոց (Պապը եւ ուրիշներ) ու արձաններու առջեւ երկրպագութիւն կ'ընեն: Կենաց ու երջանկութեան ցանկացող ժողովուրդները թող այլեւս դադրին այս եսասէր մարդոց կեղծ յայտարարութիւններուն ուշադրութիւն ընծայելէ: Եհովա Աստուած Իր մարգարէին միջոցաւ կ'ըսէ ձեզի. «Ով երկրի բոլոր ծայրերը, ինծի նայեցէք որպէս զի փրկուելիք. քանզի ես եմ Աստուած, ու ինձմէ (դատ) ուրիշը չկայ: Իմ անձիս վրայ երդում ըրի, իմ բերնէս արդարութեան խօսք ելաւ ու չդանար, որ ամէն ծունկ ինծի (եւ ոչ միայն Յիսուսի) պիտի կըրկնրէի, եւ ամէն լեզու երդում պիտի ընէ . . . : Եւ բոլոր անոր դէմ բարկացողները պիտի ամչնան» (Եսայ. ԽԵ. 22--24): Դուք, ժողովուրդներդ, պարտիք անձամբ դուք որոշել թէ որո՞ւ պիտի հետեւիք, մարդոց խորհուրդներուն, թէ ոչ Եհովայի Խօսքին:

Անցեալ տար տարուան մէջ Եհովայի Վկաները, Աստուծոյ ողորմութեամբը, ճշմարտութիւնը «Բերտոնեայ Աշխարհ»-ի իշխաններուն յայտարարած են, եւ իշխանները ոչ միայն անարգած են այդ ճշմարտութիւնը, հապա նաեւ կոյր ձեւացած են երբ ճշմարտութեան պատգամը իրենց ներկայացնողները հարածուած ու խոչտանդուած են: Եհովայի Վկաները իրենք կարեւորութիւն չունին, սակայն իբրեւ Եհովայի օժեպները, անոնք երկիրս վրայ Աստուծոյ աչքին բիրն են (Չաբարեայ Բ. 8, Բ. Օրինաց ԼԲ. 10): Այժմ Եհովայի Վկաները ձեզի, հասարակ ժողովուրդներուդ, կը դառնան, եւ

Միքեայ Ա. 2-4-ին մէջ դրուած Աստուծոյ պատգամին վրայ ձեր ուշադրութիւնը կը հրաւիրեն. «Լսեցէք, ով բոլոր ժողովուրդներ (պարփակելով նաեւ հայ ժողովուրդը), մտիկ ըրէ, ով երկիր, ու անոր բոլոր բնակիչները. եւ Տէր Եհովա ձեզի դէմ վկայ պիտի ըլլայ, Տէրը ինք իր սուրբ տաճարէն, քանզի ահա Տէրը իր տեղէն կ'ելլէ, եւ պիտի իջնէ ու երկրի բարձր տեղերուն վրայ պիտի պառտի: Ու լեռները (կառավարութիւնները) անոր տակ պիտի հալին, եւ հովիտները պիտի պատռին՝ կրակի առջեւ հալած մոմի պէս ու դառ ի վայրէն թափուած ջուրի պէս»: Ներկայ տարին ամբարտաւանորէն «սուրբ» յայտարարող անսուրբ դաշնակցութիւնը (որուն մասնակցեցան նաեւ հայ եկեղեցիները) պատշաճ առաջնորդ չկրնար ըլլալ ձեզի (Հայոց կամ ուրիշ ազգաց) ըլլաք դուք Կաթոլիկ, «Լուսաւորչական», Բողոքական թէ Հրեայ: Ներկայ տարին խաղաղութիւն ու բարգաւաճութիւն պիտի չըբէք. հապա անոր վերջաւորութեանը դուք աւելի մ'օտեցած պիտի ըլլաք Մատանային կեղեքիչ իշխանութեան վախճանին, որմէ վերջ է որ պիտի գայ իրական խաղաղութիւնն ու բարգաւաճութիւնը:

Ամբարիշտ կը կոչուին անոնք՝ որ հակառակ են Աստուծոյ Թագաւորութեան, եւ անոնց մասին դրուած է. «Ամբարիշտները խաղաղութիւն պիտի չունենան, կ'ըսէ իմ Աստուածս» (Եսայ. ՄԵ. 21): Ներկայ տարին «սուրբ» հռչակողները Աստուծոյ եւ Անոր Թագաւորութեան դէմ են, քանզի իրենց դորձքերը կ'ապացուցանեն ասիկա: Երբ Եհովայի Վկաները Թագաւորութեան տպագրուած պատգամը վերջերս Իտալիա տարին՝ Պապը եւ անոր քաղաքական ընկերակիցները այդ պատգամին տարածումը արգելեցին եւ գերբերը դրաւելով փճացուցին: Անգլիա ու Գանատա արգիլած են Աստուծոյ Թագաւորութեան պատգամին ըհտիոյով հեռարձակումը: Միացեալ Նահանգաց մէջ՝ հաւատարաց կղերներն ու անոնց դաշնակիցները՝ հրաման արձակած են որ Թագաւորութեան պատգամը ըհտիոյի կարգ մը կայաններէ չհեռարձակուի, եւ այդպէսով ար-

գլխած են այսօրուան այս պատգամին աւելի ընդարձակածաւալ կերպով հեռարձակումը: Այդ հակառակորդները կը հրճուին՝ երբ Յճովայի Վկաները ճշմարտութիւնը խօսած ըլլալուն համար կը ձեռքակալուին ու կը բանտարկուին: Ակնկալելու ենք որ անոնք այդպէս ալ ընեն, ինչու որ Յճովայի մարգարէութիւնը այդ բանը կը նախաձայնէ: Այս բաներուն վրայ այն նպատակաւ ուշադրութիւն կը հրաւիրեմ որ ժողովուրդը ըմբռնէ թէ՛ Աստուած պիտի չպատասխանէ խաղաղութեան ու բարգաւաճութեան համար այդ անտէր դաշնակցութեան ըրած աղօթքները: Յճովան անոնց նկատմամբ կ'ըսէ. «Թող ամենն ու մէկտեղ խայտառակ ըլլան (նոյն իսկ «սուրբ» կոչուած ներկայ տարուան մէջ) անոնք որ իմ վնասիս (վկաներուս) վրայ կը խընդան»-- Սաղմ. 15. 26, 27:

Յճովան՝ Իր Դանիէլ մարգարէին միջոցաւ համառօտ պատմութիւնը կ'ընէ այն գլխաւոր ազդեցութեան՝ որուն հին Յգիպտոսէն սկսեալ մինչեւ հիմա թագաւորած են, ատոնց մէջ ըլլալով նաեւ ներկայ տարին «սուրբ» յայտարարող անտէր դաշնակցութիւնը, ու ապա կ'ըսէ. «Ու այն թագաւորներուն օրերը երկինքի Աստուածը թագաւորութիւն մը պիտի հանէ, որ յաւիտեան պիտի չաւրի, եւ այս թագաւորութիւնը ուրիշի պիտի չթողուի. անիկա այս բոլոր թագաւորութիւնները պիտի փշրէ ու պիտի հատցնէ, ու ինք յաւիտեան պիտի մնայ» (Դանիէլի Բ. 44): Յճովա Աստուծոյ այս պարզ յայտարարութիւնը նկատի ունենալով՝ ժողովուրդին համար տխմարութիւն պիտի ըլլայ ակնկալել որ մարդոց կողմէ կազմուած դաշնակցութիւն մը խաղաղութիւն ու բարգաւաճութիւն բերէ: Ձեր իրական պաշտպանութեան համար՝ ես ձեզի Աստուծոյ Սօսքը մատնանիշ կ'ընեմ, որպէս զի պատեհութիւն ունենաք միակ ապահով ուղին ընտրելու: Անշուշտ դուք ազատ էք՝ ձեր կամքին համաձայն՝ ընդունելու կամ մերժելու այս պատգամը:

Իշխող դասակարգին արդէն իսկ պարզաբանուած է ճշմարտութիւնը. սակայն անոնք մերժելով

գայն՝ Աստուծոյ թշնամիին կողմը ըլլալին ցոյց տրւած են: Ներկայ տարին «սուրբ» հռչակողները Յճովայի Վկաներուն քաջած չարչարաններուն լուսմեղսակիցները կը հանդիսանան եւ Աստուծոյ զէմ կը պատերազմին: Յիսուս այդ մասին էր որ նախաձայնեց երբ ըսաւ Իր հաւատարիմ հետերորդներուն. «Չգուշացէք ձեր անձերուն. քանզի ձեզ ատեաններու պիտի մատնեն, ու ժողովարաններու մէջ ձեզ պիտի ծեծեն, եւ իմ անուանս համար կուսակալներու ու թագաւորներու առջեւ պիտի կենաք՝ անոնց վկայութիւն ըլլալու համար» (Մարկ. ԺԳ. 9): Յճովա թոյլ կու տայ որ «Քրիստոնեայ Աշխարհ»-ի իշխանութիւնները Իր վկաները հալածեն, որպէս զի Իր վկաները պատեհութիւն ունենան Իրեն նկատմամբ ունեցած իրենց հաւատարմութիւնը ցոյց տալու. իսկ «Քրիստոնեայ Աշխարհ»-ի ղեկավարներն ալ Յճովայի առջեւ ինքզինքնին դատապարտեն եւ Արմազդուին պատերազմին ատեն իրենց արժանի պատիժը ստանան: Յճովան յայտարարած էր թէ ներկայ տարին «սուրբ» հռչակողները Իր վկաներուն զէմ դաւադրութիւն մը պիտի սարքէին, որմէ վերջ Նա պիտի պատուէր անոնց ղեմակը եւ ամօթահար պիտի ընէր դանոնք, եւ Նա այդ բանը պիտի ընէր՝ որպէս զի մարդիկ գիտնան թէ Աստուած, որուն անունը միայն ԵՀՈՎԱ է, Բարձրեալ է բոլոր երկրի վրայ»-- Սաղմ. 2Գ. 18:

Վատիկանի պատին մէջէն բացուած ծակը կամ դուռը «Տիրոջ օրհնութեանց առաջնորդող ճամբուն խորհրդանշան» է, եւ հետեւաբար ձԺԼ. Սաղմոսին մարգարէութիւնը սխալ գործածուած է: Հռովմի մէջ դուռը բացողները եւ գայն «օրհնութեանց խորհրդանշան» կոչողները՝ Քրիստոսը որպէս Թագաւոր մերժած են ու Յճովան ալ զիրենք մերժած է: Սաղմոսերգուին խօսքերը Յճովայի նուիրուած ժողովուրդին կը վերաբերին, եւ Աստուած այդ հաւատարիմ վկաներուն ներկայիս ըսել կու տայ. «Բացէք ինձի արդարութեան դռները» (Սաղմոսաց ԶԺԺ. 19). ոչ թէ մարդոց կողմէ կառուցուած չինքն մը դուռը, հապա Աստուծոյ թագաւորութեան

առաջնորդող ճամբան: Մաղմոսերգուն յետոյ ցոյց կուտայ թէ «Քրիստոնէայ Աշխարհ»-ի կրօնապաշտները մերժած են Քրիստոսը, Աստուծոյ թագաւորութեան Գլխաւոր Բարը: Դարձեալ նա կ'ըսէ. «Այս է Տիրոջը դուռը, արդարները ասկէ պիտի մտնեն. կը գոհանամ զեզմէ որ ինձի պատասխան տուիր, ու ինձի փրկութիւն եղար: Այն քարը (Քրիստոս Փրկիչն ու Թագաւորը) զոր շինողները անարգեցին, անկիւնին գլուխը եղաւ» (Մաղմոսաց ՃԺԸ՝ 20-22): Եթէ ներկայ տարին «սուրբ» հրոշակող խմբակցութիւնը հաւատք ունենար Աստուծոյ թագաւորութեան վրայ, ան պիտի քարոզէր ժողովուրդին այն՝ ինչ որ Ս. Գրքը կ'ըսուցանէ, այսինքն թէ՛ Եհովան է Աստուած, թէ՛ մի միայն Քրիստոս Յիսուսի արեամբն ու թագաւորութեամբն է որ փրկութիւն ու օրհնութիւն կրնան զալ, ու ապա՝ անոնք ժողովուրդը պիտի համախմբէին եւ կարելի ամէն միջոց, նոյն իսկ քէտիօն, պիտի զորժածէին Աստուծոյ Սօսքին ճշմարտութիւնը անոնց քարոզելու համար: Բայց փոխանակ այդ ընելու անոնք Աստուծոյ ճշմարտութեան պատգամին դէմ կը կռուին ու դաւադրութիւն կը սարքեն ժողովուրդը ազէտ պահելու համար եւ յետոյ կը յանդգնին ըսել. «Մենք Աստուծոյ պիտի աղօթենք որ մեզի խողաղութիւն ու բարգաւաճութիւն ղրկէ»: Անոնք ոչ միայն յուսախաբ պիտի ըլլան, հապանաեւ ամօթի պիտի ենթարկուին:

Սատանան է որ իր ճարտարամտութեամբը դաւադրութիւն մը կաղմակերպած է ընդդէմ Եհովայի ու Անոր հետեւորդներուն. եւ այժմ նա անսուրբ դաշնակցութիւնը առաջ բերելով՝ ներկայ տարին «սուրբ» հռչակած է՝ մարդոց միաբերը Աստուծոյ թագաւորութենէն հեռացնող նպատակաւ: Եհովայի Վկաները չեն յուսար իշխողները դարձի բերել: Անոնց տրուած աստուածային պաշտօնն է պարզապէս ճշմարտութիւնը խօսիլ իբրեւ Բարձրելոյն վկաները: Ձեզի՞ որ Եհովա Աստուծոյ եւ Անոր թագաւորութեան նուիրուած էք՝ նա կ'ըսէ. «Բու Տէր Աստուածդ ես եմ ... ու իմ խօսքերս քու բերանդ

դրի, եւ զեզ ձեռքիս հովանիովը ծածկեցի, որպէս զի երկինքը հաստատեմ ու երկրի հիմերը դնեմ, եւ Սիօնի ըսեմ, Դուն իմ ժողովուրդս ես»: «Իմ վկաներս դուք էք, կ'ըսէ Տէրը, որ ես եմ (Եհովա) Աստուած»- Եսայ. ԾԱ. 15, 16, ԽԳ. 12:

Ներկայիս եկեղեցական կաղմակերպութիւններուն մէջ կան շատեր՝ որոնք մեծապէս փափաքած են որ իրենց եկեղեցին համարձակօրէն Աստուծոյ եւ Անոր թագաւորութեան համար կանգնի, բայց սաստիկ յուսախաբ եղած են: Տէրը ասոնց «բանտարկեալ» անունը կու տայ, ինչու որ ասոնք կաշկանդուած են՝ քաղաքական գործերով զբաղող կղերներու զօրաւոր ազդեցութեամբը: Այժմ ձեզի՞ բանտարկեալներուդ՝ կը մնայ կա՛մ Սատանային կաղմակերպութիւնը ընտրել կա՛մ Աստուծոյ թագաւորութիւնը: Եհովան ներկայիս կ'ըսէ ձեզի. Դու՛րս ելէ՛ք այդ անսուրբ դաշնակցութենէն, որպէս զի անոր մեղքերուն մասնակից չըլլաք եւ անոր պատիժներէն չտանանք» (Յայտ. ԺԸ. 4): Դուք պիտի կորսուիք՝ եթէ ճշմարտութիւնը չզննահատէք ու հաստատ քայլ մը չառնէք: Եհովան ներկայիս բարեացակամ մարդոց կ'ըսէ. Գիտցէ՛ք թէ ես եմ Աստուած, եւ այսօրունէն ընտրեցէ՛ք թէ որու պիտի ծառայէ՛ք (Յեսուայ ԻԴ. 15): Մարդիկ չեն կրնար երկրիս խողաղութիւն ու բարգաւաճութիւն բերել, հապա ատոնք պիտի դան այն թագաւորութեանը միջոցաւ՝ զոր Աստուած Քրիստոսի իշխանութեան տակ զբած է:

Եհովան ներկայիս իր հաւատարիմ օժեաններուն կը շնորհէ իր անունը կրելու բարձր ու մեծ պատիւը, եւ իբրեւ իր վկանները յառաջ կը ղրկէ զանոնք՝ ժողովուրդին յայտարարելու թէ ինչք է Աստուած եւ թէ իր թագաւորութիւնը մօտեցած է: Ուստի ձեզի, ո՛վ հաւատարիմ վկաներ, նա այժմ կ'ըսէ. «Անցէ՛ք, անցէ՛ք դռներէն (Աստուծոյ թագաւորութեանը մէջ), ժողովուրդին ճամբայ պատրաստեցէ՛ք. շտակեցէ՛ք, շտակեցէ՛ք շաւիղները, քարերը անկէ ժողովեցէ՛ք. ժողովուրդներուն դրօշակ վերցուցէ՛ք» (Եսայ. ԿԲ. 10): Եհովայի Վկաները ներ-

կայիս այս հրամանին պիտի հնազանդին՝ անտեսելով ամէն ընդդէմութիւն ու հալածանք:

Որպէս զի մարդիկ չկորսուին՝ անոնք ներկայիս պարտին տեսիլք մ'ունենալ Եհովայի եւ Անոր թագաւորութեան մասին: Մինչեւ որ Սատանային կազմակերպութիւնը բացարձակապէս չկործանի՝ երկրիս ժողովուրդներուն տեսական խաղաղութիւն ու բարգաւաճութիւն չեն կրնար դալ: Արմաղեդոնի պատերազմին մէջ՝ Սատանային բռնակալ կայսրութիւնը հիմնայատակ քանդելէ վերջն է, որ աշխարհիս բոլոր ազգերուն մշտնջենական խաղաղութեան ու բարգաւաճութեան համար, Եհովան, Քրիստոսի միջոցաւ, հազար տարի տեսող իրական սուրբ տարի մը կամ դարաշրջան մը պիտի հաստատէ, որ մարդոց ունեցած ամենէն ընտիր երազներն անգամ պիտի դերադանցէ:

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՕՐ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐ
ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀՍՄԱՐ

Ե ՀՈՎԱՆ՝ խաղաղութեան Աստուածը եւ ամէն օրհնութեանց աղբիւրն է: Նա պատերազմի Աստուածն է՝ երբ անհրաժեշտ կը դառնայ ամբարշտները ոչնչացնել եւ իր սուրբ անունը ջատագովել: Ան սիրոյ Աստուածն է, որ կը նշանակէ թէ Նա բացարձակապէս անչահանդիք է: Այս պահուստ արանձնաշնորհն ունիմ ձեզի ըսելու թէ Եհովան ինչո՞ւ համար է որ իր թագաւորութիւնը կը հաստատէ երկրիս վրայ, եւ թէ Ան ի՞նչ օրհնութիւններ պիտի ընծայէ ամէն անոնց որ ուզելով ձամբէն չեն շեղիր:

Իրոյր ողջամիտ անձերու համար իրական միւլթարութիւն եւ ուրախութիւն պիտի ըլլայ վստահօրէն գիտնալ թէ՛ երկրիս վրայ տեսական խաղաղութիւն ու բարգաւաճութիւն պիտի տիրեն, երբ

ամենուն պէտքերն ալ առատօրէն պիտի հոգացնին: Մարդիկ զօրութիւն չունին այս ցանկալի բաները աշխարհին ընծայելու, սակայն Եհովայի համար անկարելի բան չկայ: Յայտնի է ամենուն ալ թէ՛ ցանկալի վիճակ մը ստեղծելու համար մարդոց թափած բոլոր ջանքերը ի դերեւ ելած են, այն պատճառաւ որ բոլոր մարդիկ անկատար են: Այժմ թող ժողովուրդը մտիկ ընէ թէ մեծ Աստուածը ի՞նչ կ'ըսէ: Վճռական ապացոյց ունինք թէ՛ Եհովան քիչ ատենէն երկրիս ժողովուրդներուն պիտի ընծայէ անվերջ խաղաղութիւն, մեծ բարգաւաճութիւն, կատարեալ առողջութիւն ու երջանկութիւն եւ մշտնջենական կեանք: Կը խնդրեմ՝ ձեզմէ որ ուշադրութեամբ մտիկ ընէք՝ երբ Ս. Գրոց յայտնած ապացոյցը կու տամ: Կը սիրեմ յուսալ թէ բոլոր տխրածները մխիթարութիւն պիտի ըստանան այս պատգամին մտիկ ընելով:

Աստուած երկրիս վրայ կատարեալ մարդ մը դբաւ ու պատուիրեց անոր որ Իրեն հնազանդի, յայտնելով թէ աստուծային օրէնքին նկատմամբ անհնազանդութիւնը մահ պիտի նշանակէր: Սատանան Եհովա Աստուծոյ հակառակեցաւ եւ մարդը անձնատուր եղաւ Սատանային, ու Աստուած Իր օրէնքին համաձայն մարդը մահուան դատապարտեց: Թէ՛ ատոր իբր արդիւնք եւ թէ ժառանգական օրէնքով՝ մահը տարածուեցաւ բոլոր մարդոց վրայ, եւ այդ է պատճառը որ մարդոց վրայ մահ ու հիւանդութիւն կը տիրեն-- Հոովմ. Ե. 12:

Եհովան խոստացաւ որոշեալ ատենին յառաջ բերել Իր Հօրը, որուն միջոցաւ պիտի օրհնուէին երկրիս բոլոր ազգերը (Ծննդ. ԺԲ. 3): Այդ խոստացեալը Քրիստոս Յիսուս է, երկրիս օրինաւոր Իշխանը (Գաղ. Գ. 8, 16, 27--29): Ինկած մարդը օրհնուել կարենայէ առաջ՝ պէտք է որ նախնական մեղքէն յառաջ եկած անկարողութիւնը մէջտեղէն վերցուի, եւ ատիկա կրնար վերցուիլ այն ատեն միայն՝ երբ ուրիշ կատարեալ մարդ մը մեղաւորին տեղ կամ փոխարէն մեռնէր: Աստուած անչահախնդրաբար Յիսուսը երկրիս վրայ զրկեց, որ մարդու վերածուելով մեղաւորին տեղը մեռաւ. եւ

այդպէս իր թափած արիւնը հայթայթեց մարդուն փրկագինը (Յովհ. Գ. 16, Ա. Տիմ. Բ. 3-6) : Աստուած Յիսուսը մահուրէն յարոյց՝ ոչ թէ իրրեւ մարդ մը՝ այլ իրրեւ աստուածային արարած մը, եւ Անոր տուաւ՝ աշխարհի Իշխանն ու Աստուծոյ սուրբ անուան Չատագովին ըլլալու վսեմ պաշտօնը : Յիսուս երկինք համբառնալուն պէս այդ բարձր պաշտօնը չստանձնեց, ինչու որ Եհովան ըսաւ Անոր. 'Թշնամին քու սուրբերուդ պատուանդան ընելու իմ ժամանակիս սպասէ' (Մաղմ. ձԺ. 1) : Յիսուս սպասեց, եւ Աստուծոյ ժամանակը ներկայիս հասած ըլլալով՝ նա Յիսուսը զրկեց իշխելու եւ աշխարհը դատելու համար :

Յիսուս երկրիս վրայ եղած ատեն՝ ամէն բանէ աւելի շեշտեց Աստուծոյ թագաւորութիւնը եւ իր Հօր անուան Չատագովութիւնը : Նա խոստացաւ վերադառնալ եւ այդ թագաւորութիւնը հաստատել մարդոց մէջ : Սպասումի այդ երկար շրջանին, այսինքն՝ Քրիստոս Յիսուսի երկինք համբառնալէն մինչեւ Անոր կրկին դալը, Սատանան, անարգել, յառաջ բերած է հզօր կազմակերպութիւն մը՝ որ բուն կերպով հակառակած է Աստուծոյ ու Անոր թագաւորութեան : Եօշափելի իրողութիւններով լիովին հաստատուած Ս. Գրոց ապացոյցը այն է թէ՛ 1914-ին հասաւ սպասումի շրջանին վախճանը եւ Քրիստոս Յիսուսի թագաւորել սկսելու ժամանակը (Մատթ. ԻԴ. 1-22) : Եհովան այդ ժամանակ անմիջապէս Յիսուսը զրկեց թագաւորելու եւ թշնամին արտաքսելու համար (Մաղմ. ձԺ. 2-4) : Սատանան մերժեց հեռանալ, եւ դիմադրութիւն ցոյց տալով՝ պատերազմ տեղի ունեցաւ երկնից մէջ եւ Սատանան երկինքէն վար՝ երկրիս վրայ նետուեցաւ, ուր նա կը շարունակէ դործել՝ թէեւ մարդկային աչքերու անտեսանելի (Յայտ. ԺԲ. 1-17) : Եհովա Աստուծոյ բացայայտ կամքն է որ Սատանան ու անոր հզօր կազմակերպութիւնը ոչնչացուին, որպէս զի Եհովայի անունը Չատագովուի եւ երկրիս ժողովուրդները անարգել պատեհութիւնը ունենան Աստուծոյ թագաւորութեան օրհնութիւնները ստանալու :

Տեղի ունենալիք յաջորդ մեծ դէպքն է Արմագեդոնի պատերազմը, որուն իբր արդիւնք Սատանային կազմակերպութիւնը պիտի կործանի : Միեւնոյն ատեն՝ Աստուծոյ առաջնորդութեամբը՝ ճշգրտութիւնը վկայութեան համար ազդեբուն կը բարոյուի, որպէս զի փախաբողները Աստուծոյ կողմը անցնին եւ մեծ պատերազմէն անմաս դուրս դալով թագաւորութեան օրհնութիւնները ստացողներուն առաջինները ըլլան : Անտարկոյս՝ Սատանան իր կրցածը պիտի ընէ ու կ'ընէ ժողովուրդը ճշմարտութիւնը լսելէ արգիլելու համար : Աշխարհը կառավարող անկատար մարդիկը կոյր են Աստուծոյ նպատակներուն նկատմամբ : Անոնք Անոր թագաւորութեան մասին տեսիլք (յայտնութիւն) չունին, հետեւաբար, անոնք Սատանային զլերակալ դահերն եղած են : Անոնք կը ջանան խաղաղութիւն ու բարգաւաճութիւն բերել, սակայն անոնք դատապարտուած են անարգ ձախողութեան :

Քրիստոսի իշխանութեան տակ դրուած Աստուծոյ թագաւորութիւնը աշխարհի խաղաղութիւն պիտի բերէ՞ արդեօք : Այո՛, յաւիտենական խաղաղութիւն : Երբ արու մանուկ Յիսուսը Բեթլէհէմի մէջ ծնաւ, Եհովան իր երկնային պատգամաբօսներուն ծանուցանել տուաւ թէ՛ այդ Հօրը որոշեալ ժամանակին երկրիս վրայ խաղաղութիւն ու մարդոց մէջ հաճութիւն պիտի բերէր (Ղուկ. Բ. 9-14) : Եհովան միշտ իր խոստումները իր ատենին կը կատարէ, եւ ասիկա ալ անպատճառ պիտի կատարուի : Եհովան՝ նոյն Հօրքին ակնարկելով՝ իր մարդարէին միջոցաւ կ'ըսէ. «Վասն զի մեզի մանուկ մը ծնաւ, մեզի որդի մը տրուեցաւ, եւ իշխանութիւնը անոր ուսին վրայ պիտի ըլլայ, եւ անոր անունը պիտի կոչուի Սքանչելի Ոորհրդակից, Հօր Աստուած, Յաւիտենականութեան Հայր, Սաղաղութեան Իշխան : Դաւիթի աթոռին վրայ ու անոր թագաւորութեանը վրայ անոր իշխանութեանը մեծնալուն ու խաղաղութեանը սահման չկայ, որպէս զի հիմակուրէն մինչեւ յաւիտեան իրաւունքով ու արդարութիւնով հաստատէ եւ զօրացնէ դանիկա : Զօրաց Տիրոջը նախանձը պիտի ընէ ասիկա»

(Եսայ: Թ. 6, 7): Ե՛հովայի ու Անոր Խօսքին վրայ հաւատք ունեցողները զիտեն թէ՛ Տէրը անպատճառ պիտի պահէ ու կատարէ այս խոստումը:

Ե՛հովա Աստուծոյ բերնէն ելած այս որոշ խօսքը նկատի ունենալով՝ ինչո՞ւ համար դուք, ո՛վ ժողովուրդ, տակաւին մտասանջութեան ու տարակոյտի մէջ մնաք եւ մտիկ ընէք անկատար մարդոց յայտարարութիւններուն թէ՛ իրենք կրնան երկրիս վրայ խաղաղութիւն ու բարգաւաճութիւն բերել: Այլ հասած է ժամանակը որ մարդիկ ընտրեն կա՛մ Աստուած կա՛մ Սատանան. երբ՝ մարդիկ աւրելու համար պարտին Ե՛հովա Աստուծոյ մտիկ ընել եւ հնազանդիլ, եւ կամ կոյր առաջնորդներուն հետեւելով մեռնիլ: Ես ձեզի չեմ աղաչեր որ դուք Աստուծոյ հնազանդիք: Բանզի՛ եթէ մէկը չկրնար ըմբռնել թէ՛ իր ամենամեծ առանձնաշնորհն է Ե՛հովա Աստուծոյ ծառայել, այդ անձը արժանի չէ ապրելու: Ե՛հովայի առաջնորդութեամբը ներկայիս ճշմարտութիւնը կը յայտարարուի Ժողովուրդին, որպէս զի անոնք Անոր նպատակներուն մասին տեսիլք (յայտնութիւն) մ'ունենան. ուստի զրուած է. «Առանց մարգարէութեան (յայտնութեան կամ տեսիլքի) ժողովուրդը կը խտորի» (Առակ. ԻԹ. 18): Եթէ կը փափաքիք ապրիլ ու երջանիկ ըլլալ՝ Ե՛հովայի կազմակերպութեան մէջ մտէք: Բրիտոսոսի իշխանութեան տակ զրուած Անոր թագաւորութիւնն է որ մշտնջենական խաղաղութիւն ու բարգաւաճութիւն պիտի բերէ:

Ներկայիս մեծ վախ կայ թէ ազգերու միջեւ պատերազմ տեղի պիտի ունենայ, ու այդ պատճառաւ ազգերը պատերազմի կը պատրաստուին: Եթէ բովանդակ երկրիս վրայ միայն մէկ իշխան մը տիրէր եւ այդ իշխանը իմաստութեամբ կատարեալ ըլլար եւ իր զօրութիւնը ամենուն համար ալ արարութեամբ ի դորձ զնէր՝ այդ պարագային ազգերուն միջեւ պատերազմ ամենեւին տեղի չէր կըրնար ունենալ: Աստուծոյ թագաւորութեան մէջ միայն մէկ իշխան կայ, Բրիտոսոս Յիսուս, Ե՛հովայի զլխաւոր գործադիրը, որուն վրայ կը հանդէսին Ամենակալէն շնորհուած ամէն զօրութիւն ու

Իշխանութիւն (Մատթ. ԻԸ. 18): Նա կատարեալ է արդարութեամբ, իմաստութեամբ, սիրով ու զօրութեամբ: Բրիտոսոս Յիսուս Ե՛հովայի իրական պատկերն է (Եբր. Ա. 1-9): Բրիտոսոս Յիսուս աշխարհի արդարագատ իշխանն է, եւ Ս. Գրոց մէջ Անոր մասին զրուած է. «Ով Աստուած, ջու աթոռը յաւիտեանս յաւիտենից է. ջու թագաւորութեանդ գաւազանը ուղղութեան գաւազանն է» (Սաղմոսաց ԽԵ. 6): Ե՛հովան իր մարգարէին միջոցաւ խօսելով կ'ըսէ Յիսուս Թագաւորին մասին. «Ահա գանիկա ժողովուրդներուն ... առաջնորդ ու հրամանատար զրի» (Եսայ. ԾԵ. 4): Եթէ կ'ուզէք ապրել, Յիսուսի առաջնորդութեանը հետեւեցէք:

Գարձեալ՝ Ե՛հովան կ'ըսէ Յիսուսի. «Քեզ ժողովուրդին ուխտ ըլլալու տուի, որպէս զի երկիրը հաստատես, ու արուած ժառանգութիւնները (Ժողովուրդին) ժառանգեցնես» (Ես. ԽԹ. 8): Բրիտոսոս Թագաւորը բացարձակ արդարութեամբ պիտի իշխէ, եւ Անոր առջեւ ամէնն ալ հաւասար պատեհութիւն պիտի ունենան օրհնուելու (Ա. Պետ. Ա. 17, Սաղմ. ՃԺԹ. 137): Անցելոյն մէջ բոլորս ալ կը հաւատայինք թէ՛ օրհնուելու համար մէկը պէտք է մեռնի ու երկինք երթայ, բայց ա՛յ եկած է Աստուծոյ ժամանակը, որ մարդիկ աւելի որոշ ըմբռնում մ'ունենան Անոր նպատակներուն մասին, որոնք կը յայտնեն մեզի թէ շատ քիչեր միայն երկինք պիտի երթան եւ թէ ապրող մարդոց մեծամասնութիւնը մշտնջենական բնակարան պիտի ունենայ երկրիս վրայ, որը յաւիտենական երջանիկ բնակութեան յարմար ու ցանկալի վայրի մը պիտի վերածուի: Աստուած իր Գրքին մէջ կը յայտարարէ թէ՛ Ինք երկիրը մարդուն բնակութեան համար ստեղծեց եւ թէ «երկիրը յաւիտեան կը մնայ» --Եսայ. ԽԵ. 12, 18, Ժողովուրդի Ա. 4:

Մարդիկ անկատար կառավարիչներու դաժան խարդանին ներքեւ այնքան երկար ատեն ապրած են՝ որ անոնք չեն դիտեր թէ արդեօք միշտ այդպէ՞ս պիտի ըլլայ: Ս. Գիրքը կը պատասխանէ, Ոչ. այլ, ընդհակառակը, Բրիտոսոսի իշխանութեան տակ զրուած աստուածային թագաւորութիւնը ար-

զարազատ կառավարութիւն մը պիտի ըլլայ, որուն մէջ անկատար մարդ մը ունէ բաժին պիտի չունենայ եւ ոչ ալ պատեհութիւն պիտի ունենայ իր նմանները կեղեքելու (Գան. Բ. 44): Քանի որ Քրիստոս Յիսուս մարդկային աչքերու յաւէտ անտատուելիք աստուածային թաղաւորութեան տեսանելի վարչութիւնը որո՞ւն ձեռքին մէջ պիտի ըլլայ: Ս. Գիրքը կը պատասխանէ՝ թէ Երկրային կառավարութեան գործերու վարչութիւնը միմիայն անոնց ձեռքին մէջ պիտի ըլլայ, որոնք Աստուծոյ կազմակերպութեան կը պատկանին: Այդպիսի կարգ մը մարդիկ մասնաւորապէս յիշուած են Եբրայեցոց ԺԱ. գլուխին մէջ: Աբէլէն մինչեւ Յովհաննէս, Քրիստոսի նախակարապետը, երկրիս վրայ ապրեցան խումբ մը մարդիկ՝ որոնք առ Աստուած ունեցած իրենց ուղղամտութիւնը (ինքէկրիթի) պահեցին եւ իրենց արեան գնովը՝ Բարձրելոյն նկատմամբ ունեցած իրենց հաւատարմութիւնը ցոյց տուին: Ըստ Ս. Գրոց ընծայած ծանօթութեան, Եհովան այն խոստումը ըրած է թէ՛ երբ Քրիստոսի թաղաւորութիւնը հաստատուի, այդ հաւատարիմ մարդիկը մահուրէն պիտի յարուցուին եւ երկրիս վրայ Քրիստոսի կառավարութեան տեսանելի ներկայացուցիչները պիտի ըլլան: Աստուած որոշապէս կը յայտնէ թէ՛ անոնց ցոյց տուած հաւատարմութեանը պատճառաւ՝ իր թաղաւորութեանը մէջ տեղ մը պատրաստած է անոնց համար (Եբր. ԺԱ. 16-40): Ու երկրիս վրայ հաստատուելիք Անոր թաղաւորութեանը մէջ ի՞նչ պիտի ըլլայ անոնց պաշտօնը: Ս. Գիրքը Սաղմ. 106-ով կը պատասխանէ թէ՛ երբ այդ հաւատարիմները զերեզմանէն դուրս բերուին իբրեւ կատարեալ մարդիկ, անոնք որպէս կառավարիչներ, այսինքն՝ երկրիս վրայ որպէս Քրիստոսի տեսանելի ներկայացուցիչներ պիտի կարգուին, եւ այդ բացարձակ ու արդարազատ Դիկտատորին իշխանութեան տակ պիտի գործեն:

Ներկայիս երկրիս վրայ ապրող միլիոնաւոր մարդիկ կան, որոնք՝ Քրիստոսի իշխանութեան

տակ դրուած կառավարութեան գործերը վարելու համար այդ հաւատարիմ մարդոց մահուրէն յարուցուելը եւ իբրեւ կատարեալ մարդ ետ բերուելը պիտի տեսնեն. եւ այդ կառավարութեան կիրարկման մասին Նաայ. 1Բ. 1-ին մէջ գրուած է. «Ահա թաղաւոր մը արդարութեամբ պիտի թաղաւորէ, ու իշխանները իրաւունքով պիտի իշխեն»:

Աստանային ամբարիշտ կազմակերպութիւնը մէջտեղէն վերցնելու համար պէտք է որ ուրիշ պատերազմ մը եւս տեղի ունենայ, եւ ատիկա պիտի ըլլայ Ամենակալ Աստուծոյ մեծ օրուան պատերազմը կամ Արմազեկոնը: Այդ պատերազմը անհրաժեշտ է որ տեղի ունենայ, քանզի Աստանան ժողովուրդը գերի կը պահէ եւ Նհովա Աստուծոյ ու երկրիս օրինաւոր թաղաւորին կը հակառակի: Ուստի Նհովան կ'ըսէ իր Քրիստոս թագաւորին. «Ով Հօր, թուրդ մէջըդ կապէ ... ու քու վայելչութիւնովդ յաջողուէ. ճշմարտութեան եւ հեղուջեան ու արդարութեան համար հեծիր. եւ քու աջ ձեռքդ քեզի ահաւոր բաներ պիտի սորվեցնէ» (Մաղմ. 106. 3, 4): Արմազեկոնի պատերազմէն վերջ ալ ուրիշ պատերազմ տեղի պիտի չունենայ, հասար երկրիս վրայ յաւիտեան խաղաղութիւն պիտի տիրէ: Աստուած իր թաղաւորութեան որպէս խորհրդանշան կը գործածէ քարէ յաւիտենական լեռները, եւ պատերազմին վերջանալուն ու մշտնջենական խաղաղութեան մասին իր մարգարէին բերնով կ'ըսէ. «Բայց վերջին օրերը պիտի ըլլայ որ Տիրոջը տանը լեռը (թաղաւորութիւնը) լեռներուն (թաղաւորութիւններուն) գլխուն վրայ պիտի հաստատուի, եւ բլուրներէն վեր պիտի բարձրանայ, ու ժողովուրդները հեղեղի պէս անոր պիտի դիմեն. եւ շատ ազգեր պիտի երթան ու ըսեն, Եկէ՛ք, Նհովայի լեռը (թաղաւորութիւնը), Յակոբի Աստուծոյն տունը, ելլենք, որպէս զի մեզի իր ձամբները սորվեցնէ, ու անոր յաւիտենական մէջ քարենք. վասն զի օրէնքը Սիոնէ, ու Տիրոջը խօսքը Երուսաղէմէ (Աստուծոյ կազմակերպութեան) պիտի ելլէ. եւ անիկա շատ ժողովուրդներու մէջ դատաստան պիտի ընէ, ու զօրաւոր ազգեր մինչեւ հե-

ուսոր տեղեր պիտի յանդիմանէ. ու անոնք իրենց սուրբերը խոփեր, եւ իրենց նիղակները յօտոցներ պիտի շինեն. աղգ աղգի վրայ սուր պիտի չվերցնէ, եւ ալ պատերազմ պիտի չսորվին. հասպ ամէն մարդ իր որթին տակ ու իր թղենիին տակ պիտի նստի, ու վախցնող պիտի չըլլայ»-- Միք. Դ. 1-4:

Աղգերու միջեւ տեղի ունեցած պատերազմները զիւային են: Սատանայէն դրդուած ընչաքաղցութիւնն ու ատելութիւնն են որ մարդիկ իրարու դէմ պատերազմելու կը մղեն: Յճովան պատերազմ կը մղէ միայն այն նպատակաւ՝ որ արդարօրէն պատժէ ամբարիշտները, որոնք մարդկութիւնը կը կեղեքեն եւ իր սուրբ անունը կը նախատեն: Մարդիկ կը սոսկան պատերազմէ եւ խաղաղութեան շատ կը ցանկան: Անոնք կը բաղձան արդարադատ իշխանութեան մը՝ որ իրենց խաղաղութիւն ու բարգաւաճութիւն երաշխաւորէ յաւիտեան: Աղգերուն ցանկացածը (ցանկային), արդարութեան ու խաղաղութեան Թագաւորը, Քրիստոս, Յճովայի հզօր Ձատագովիչն է, թէեւ մարդոց մեծ մասը տեղեկութիւն չունի Անոր Թագաւորութեան մասին (Անդ. Բ. 6, 7, Հովմ. Բ. 19-22): Քրիստոսի իշխանութեան տակ երկրիս վրայ հաստատուելիք Աստուծոյ Թագաւորութիւնն է որ մշտնջենական խաղաղութիւն պիտի բերէ ժողովուրդին: Երբեք կարելի չէ որ անձնասէր մարդոց շանքերով այդպիսի բան մը դուրս հանուի, եւ յիմարութիւն է հաւատալ թէ անոնք կրնան դուրս հանել: Տէրը չպատուիրեր որ մարդիկ մասնաւոր ժամանակաշրջան մը որոշեն եւ այդ շրջանին աղգերուն խաղաղութեանը համար աղօթեն. սակայն Նա կ'ըսէ. «Երբ աղօթելու ըլլաք՝ ըսէք, Գու թագաւորութիւնդ դայ. քու կամքդ ըլլայ, ինչպէս երկինքը՝ նոյնպէս երկրի վրայ» (Մատթ. 2. 10): Երկրիս վրայ խաղաղութիւն ունենալու համար՝ պէտք է որ խաղաղասէրները Աստուծոյ կաղմակերպութեան պատկանին: Այդ կաղմակերպութեան Գլուխը Քրիստոս Յիսուս, Թագաւորն է. ուստի Յճովան ներկայիս իր հաւատարիմ վկաներուն կը պատուիրէ վեր բարձրացնել ճշմարտութեան դրօշը եւ ժողովուրդին մատնանիչ ընել Թագաւորութիւնը (Յսայ.

ԿԲ. 10): Նա ժողովուրդին չպատուիրեր որ Հոովմ երթալով «Քրիստոնեայ Աշխարհ»-ի խաղաղութեան համար աղօթեն, հասպ կ'ըսէ. «Երուսաղէմի (Աստուծոյ կաղմակերպութեան) խաղաղութիւնը խնդրեցէք. Թող յաջողին անոնք որ քեզ կը սիրեն: Սաղաղութիւն թող ըլլայ քու պարիսպներուդ մէջ, ու յաջողութիւն՝ քու պալատներուդ մէջ» (Մաղմ. ձԻԲ. 6, 7): Երբ այսպիսի աղօթք մը անկեղծօրէն կ'արտասանուի, այն ատեն մարդիկ Աստուծոյ կաղմակերպութեան հետ մտաւորապէս կը ներգաշնակին եւ ի վիճակի կ'ըլլան Անոր առատ օրհնութիւններն ստանալու:

Ինչո՞ւ համար մարդիկ տակաւին զլիսահակ խաւարի մէջ քայլեն, մարդկային կոյր առաջնորդներու քայլերուն հետեւելով: Ինչո՞ւ համար անոնք վեր չբարձրացնեն զուխնին ու ջնային Աստուծոյ ու Անոր Թագաւորութեան, եւ այն բարեգութ ու յորդառատ կարգադրութեան՝ զոր Նա ըրած է զինքը սիրողներուն ու Իրեն հնազանդողներուն համար: Դարեր առաջ՝ Տէրը նախաձայնեց ներկայիս երկրիս ժողովուրդներուն վրայ եղած տաղնապին ու անկութեան մասին, եւ Նա կը յայտարարէ թէ ատիկա սարցոյց է Սատանայի չար աշխարհին վերջացած եւ իր Թագաւորութեան եկած ըլլալուն, եւ թէ Նա քիչ ատենէն պիտի ազատէ Իրեն սպասողներն ու հնազանդողները: Այդ մասին Անոր ըրած մարգարէութիւնն ու կատարուած իրողութիւնները առատօրէն ցոյց կու տան թէ՛ Թագաւորութիւնը եկած է ու ազատագրութեան ժամանակը խիստ մօտ է:

Ես ձեզի չեմ աղաչեր որ Աստուծոյ կաղմակերպութեան մէջ մտնէք, հասպ՝ իրրեւ Յճովայի վկաներէն մին՝ ես ձեզի մատնանիչ կ'ընեմ իրողութիւնները, իսկ դուք ալ ազատ էք ընելու ինչ որ կ'ուզէք: Մարդուն ամենամեծ առանձնաշնորհն է Յճովա Աստուածը ճանչնալ ու Անոր ծառայել, ինչու որ կեանք եւ անոր յարակից օրհնութիւններն ստանալու համար ուրիշ ճամբայ չկայ: Յճովայն ու Անոր Թագաւորութեան մտային անոր համար ընդարձակ վկայութիւն կը տրուի՝ որ մարդիկ տեղեկութիւն ստանան, եւ երբ դուք տեղեկութիւն կը ըս-

տանաք՝ ձեր վրայ պարտականութիւն կը ծանրանայ այս կամ այն ընթացքին հետեւելու: Գիտութիւնն ու հասկողութիւնը կարեւոր են մեզի համար. ուստի Եհովան կ'ըսէ թէ Իր նպատակներուն մասին տեսիլք (յայտնութիւն) չունեցողները կը խոտորին, եւ երջանիկ են անոնք որ Իր օրէնքին մտիկ կ'ընեն ու կը հնազանդին:

Աղգերու պատմութիւնը ցոյց կու տայ թէ՛ միշտ միայն փոքրամասնութիւն մը նիւթապէս բարգաւաճ եղած է, իսկ ժողովուրդին մեծամասնութիւնը յաճախ չբաւարարութեան մատնուած է: Ներկայիս չնայելով որ երկիրը ունէ ժամանակէ աւելի մեծ չափով նիւթական հարստութիւն արտադրած է, ամէն աղքատ մէջ ալ կան միլիոնաւոր անձինք՝ որոնք կենաց տարրական պէտքերուն կարօտութիւնը կը քաշեն: Անտարակոյս ասոնց ամէնն ալ բարգաւաճութեան կը բաղձան, եւ կարգ մը մարդիկ ալ կան որոնք կը ջանան բարգաւաճութիւն առաջ բերել՝ այդ բանին համար աղօթելու մասնաւոր ժամանակաշրջան մ'որոշելով: Ս. Գիրքը ցոյց կու տայ թէ Տէրը աղօթքի այն ատեն միայն կը պատասխանէ՝ երբ Իր կամքին համաձայն կ'աղօթենք: Աստուած այնպէս յայտնած է թէ՛ Քրիստոսի իշխանութեան տակ դրուած աստուածային թագաւորութեան միջոցաւ է որ բարգաւաճութիւն կրնայ գալ ամենուն: Ի՞նչ է պատճառը որ մարդոց ջանքերովը բարգաւաճութիւն չէ եկած բոլորին ալ: Քանզի երկրիս վրայ տիրող արդարադատ իշխան մը չկայ, որովհետեւ բոլոր մարդիկն ալ անկատար են: Առակ. ԻԹ. 2 եւ 1A-ին մէջ գրուած է. «Եթէ արդարները զօրանան, ժողովուրդը կ'ուրախանայ. ցայց երբ ամբարիշտը իշխանութիւն կ'ունենայ, ժողովուրդը կը հեծէ: ... Աղքատները ճշմարտութեամբ (կամ հաւատարմօրէն) դատող թագաւորին աթոռը յախտեան հաստատ կ'ըլլայ» Քրիստոս Յիսուս է այն Հաւատարիմը որ արդարութեամբ պիտի իշխէ, եւ ժողովուրդին բարգաւաճութիւն պիտի գայ Իր տիեզերական իշխանութեամբը, ոչ թէ ուրիշ ունէ կերպով: Անոր մասին գրուած է. «Իր մէջքի դօտին

արդարութիւն, ու իր երկամունքներուն դօտին հաւատարմութիւն պիտի ըլլայ»- Եսայ. ԺԱ. 5:

Ներկայ մեր օրուան մէջ, երբ Եհովան Իր Թագաւորը դահին վրայ հաստատած է, Նա Իր հաւատարիմ վիաններուն պատուէր կու տայ Թագաւորութեան բարգաւաճութեանը համար աղօթել (Սաղ. ձժԲ. 19--26): Ասով կ'ախարհուի ո՛չ միայն նիւթական բարգաւաճութեան՝ հապա նաեւ ատոր ընկերացող արդարութեան ու խաղաղութեան ուրիշ յորդառատ օրհնութիւններու: Անոնց աղօթքները բարգաւաճութիւնը չեն փութացներ, այլ՝ այդպէս աղօթողները պատշաճ վիճակի մէջ կ'ըլլան Աստուծոյ պատրաստած օրհնութիւններն ստանալու:

«Տիրոջն է երկիր ու անոր լիութիւնը», եւ թագաւորութեան մէջ Անոր հնազանդողները՝ իրենց բարօրութեանն ու երջանկութեանը համար Աստուծոյ պատրաստած առատ օրհնութեանց պիտի արժանանան (Սաղմ. ԻԳ. 1--5): Քրիստոսի թագաւորութեան օրով՝ ունէ մէկը պիտի չարտօնուի ի դին իր դրացիին բարգաւաճելու. եւ այս մասին մեզի ապահովութիւն տրուած է, որովհետեւ այդ ամբողջ սուրբ թագաւորութեան մէջ՝ վնաս պատճառող ոչ մէկ բան պիտի թոյլատրուի-- Ես. ԺԱ. 11:

Հողագործներն ու պղտիկ շարթալճար ստացողներն են որ ժողովուրդին ուտելիքը արտադրող հողերու վրայ տընջան աշխատած են, իսկ միւս կողմէն՝ ագահութենէ մղուած դրամատէր անխիղճ հսկաններն են որ հարստացած են ուտեստեղէններու դիները, կամայականօրէն կառավարելով եւ անարդարութեամբ վարուելով այնպիսի բերքերու նկատմամբ՝ որոնց վրայ իրենք աշխատանք չեն թափած: Երկրին դրամին մեծագոյն մասին տիրացած ըլլալով՝ անոնք գրաւադրով (մօրթիկէն) գնուած ազարակներու եւ բնակարաններու փոխարէն դրամ փոխ տուած են, որոնց համար արտակարգ համեմատութեամբ տոկոս կը ստանան. ու այժմ հետեւանքը այն է որ հողագործներն ու համեստ բնակարանի մը տէր եղողները տաղանապի մէջ են, ինչու որ անոնց տարիներու աշխատութեամբ շահած դրամները կը կողոպտուին եւ անոնց ստացուածքներն ալ իրենց

ձեռքէն կը խլուին կալուածագրերու խափանումովը (Փորքլօժըր ավ մօրք-կէն) : Այս վրդովեցուցիչ եւ ողբալի կացութեան պատճառաւ՝ կառավարութիւնները փորձառական (էֆսիէրիմէնքը) ծրագրերնէր կ'որդեգրեն՝ ազարակ ու տուն ունեցողները փրկել ջանալով : Այսպիսի բոլոր ջանքերը դատապարտուած են վիժելու, ինչու որ գերաւորները (մօրք-կէն հօլտըրս), Շայլաքի նման, մարմինէն այսինչ չափ կտոր կը պահանջեն, եւ անկարող ըլլալով իրենց պահանջած դրամը ստանալու՝ ազարակներն ու տուները կը գրաւեն ու տէրերը կ'արտաքսեն որ չարչարուին ու մեռնին : Աստուած կը լսէ կեղեքողներուն տաղնապի աղաղակները՝ եւ կը յայտարարէ թէ՛՝ Ինք տառապող մարդկութեան պաշտպան պիտի կանգնի : Բաղխումը անխուսափելիօրէն տեղի պիտի ունենայ, եւ անկէ վերջ ի՞նչ : Գրիստոսի իշխանութեան տակ դրուած աստուածային թագաւորութիւնը՝ մարդոց հետ վարուելու արդար եւ ուղիղ մեթօտ մը պիտի հաստատէ, եւ այդ դրութեան տակ՝ ուեէ դասակարգի թոյլ պիտի չըտորուի ուրիշի մը վնասովը շահաւորելու : Այդ ատեն, այլեւս գոյութիւն պիտի չունենան չափազանց հարուստներ ու չափազանց աղքատներ, հապա ամէնն ալ համահաւասար աստիճանի մը պիտի բերին : Երբ արդարադատ Թագաւորը իշխանութեան գլուխը անցնի, ժողովուրդները պիտի հրճուին, ինչու որ անոնց այն ապահովութիւնը պիտի տրուի թէ՛ անոնք պիտի կրնան իրենց աշխատութեանց պըտուղը վայելել : Այս մասին Աստուած իր մարդարէին միջոցաւ կ'ըսէ. «Անոնք պիտի չչինն» որ ուրիշները բնակին, անոնք պիտի չունենն՝ որ ուրիշները ուտեն» (Ես. 46. 21, 22) : Հողագործներն ու աշխատաւորները այն երաշխաւորութիւնը պիտի վայելին՝ թէ՛ իրենք բաւականաչափ ուտելիք պիտի ունենան : Անոնք իրենց տուները կ'որսնցնելու վախն ալ պիտի չունենան, ինչու որ դրուած է թէ՛ ամէն ոք իր որթին ու թղենիին տակ պիտի նստի ու վախցընող բան մը պիտի չըլլայ-- Մի.բ. 7. 4 :

Այս առատութեան երկրին (Մ. Նահնդաց) մէջ՝ ներկայիս այրերու, կրներու եւ մանուկներու

երկար շարքեր ուտելիք կը խնդրեն, ոչ թէ որովհետեւ ուտելիքի նուազութիւն կայ՝ այլ որովհետեւ մի քանի անձնասէր մարդիկ իրենց ափին մէջ առած են գոյութիւն ունեցած ամէն ինչ, եւ ուրիշներ կարող չեն գործ գտնել, որ դրամ վաստկելով իրենց պէտք եղած բաները գնեն : Գրիստոսի արդարադատ իշխանութեան տակ՝ անկարելի է որ այսպիսի կացութիւն մը գոյութիւն ունենայ, ինչու որ այն ատեն ապրողները ուրախութեամբ պիտի գործեն եւ առատ ուտելիք պիտի ունենան : Քանզի Աստուծոյ Խօսքը կ'ըսէ. «Ինչաւորներուն (որոնք ժողովուրդը կեղեքած են) ցնծութեան ձայնը պիտի ցածնայ : Եւ դորաց Տէրը այս լեռանը (Թագաւորութեանը) վրայ բոլոր ազգերուն կոչունք մը պիտի ընէ, պարարտ բաներու եւ հին գինիներու, ծուծով լեցուած պարարտ բաներու, ու դրուած հին գինիներու կոչունք»-- Եսայ. ԻԵ. 5 :

Հողագործները յաճախ մեծապէս վնասուած են միջլատներէ, մակարոյժներէ, եւ անոնց բերքերը փճացնող ուրիշ դարչաճճիներէ (վըրմին) : Անոնց այնպէս ըսած են թէ՛ այդ աւերիչները Աստուած է որ իրենց վրայ դրկած է որպէս պատիժ : Այդ օրինակ ամբաստանութիւն մը նախատինք մըն է Աստուծոյ սուրբ անունը : Այդ աւերիչները յառաջ բերողը այս չար աշխարհի աստուածը՝ Սատանան է (տես Յորայ Բ. 6, եւ Ելից Է. եւ ԺԳ. զլուխները), որուն նպատակն է ստիպել ժողովուրդը որ այդ բաներուն համար զԱստուած մեղադրեն եւ այդպէս յուսալքուելով անոնք զԱստուած նողմեն եւ հեռանան Անկէ : Այդ աւերիչներուն գործած նախճիրներուն հետեւանքը յաճախ սով եղած է. սակայն երբ Թագաւորութիւնը սկսի լիազօր իշխանութեամբ դործել եւ մարդիկ սորվին Աստուծոյ հնազանդել, Աստուծոյ խոստումը այն է թէ՛՝ այն ժամանակ Աստուծոյ փրկարար առողջութիւնը մարդոց մէջ պիտի ըլլայ եւ «երկիր իր պտուղը պիտի տայ»-- Սաղմոսաց Կէ. 2, 6 :

Մ. Գրոց մէջ գտնուած ամենակարեւոր ճշմարտութիւնն է՝ Եհովայի սուրբ անունն ջատագովութիւնը : Եհովան է ամէն կեանքի ու ճշմարտութեանց

ապրիլը: Իսկ Սատանան է մահուան ու ամէն սրտութեանց գլխաւոր պար: (Յովհ. Ը. 44): Երկար ժամանակ առջ Սատանան հրաւէր կարողաց Աստուծոյ՝ որ եթէ կրնայ՝ երկրի վրայ դնէ Իրեն հաւատարիմ մնալու կարող մարդիկ. հետեւաբար Եհովան թոյլ տուաւ Սատանային որ ջանայ իր կըրցածին ամենավատը ընել՝ իր ամբարիշտ մարտահրաւէրը ապացուցանելու համար: Եղեմէն սկսելով մինչեւ այժմ տեսող երկար ժամանակաշրջանին՝ շատ քիչներ հաւատարիմ մնացած են Աստուծոյ, եւ ատոնք իրենց ցոյց տուած հաւատարմութեամբը ջատագովութիւն մ'եղած են Եհովայի անուանը: Ուրիշ միլիոնաւոր մարդիկ մեռած են առանց Եհովան ճանչնալու. սակայն երբ ատոնք գերեզմանէն ետ բերուին ու ճշմարտութեան տեղեկանան, այն ժամանակ անոնք պատեհութիւն պիտի ունենան Աստուծոյ հնազանդելով ապրելու, եւ ատիկա ջատագովութիւն մը պիտի ըլլայ Եհովայի անուանը: Ժամանակը հապած է որ ա'լ վճռուի գոյութիւն ունեցած մեծ հարցը թէ ո՞վ է տիեզերքի մէջ Գերագոյնը: Քիչ ատենէն Սատանան ու անոր կազմակերպութիւնը պիտի ոչնչացուին, որմէ վերջ Աստուծոյ թագաւորութեան բարիքները մատչելի պիտի ըլլան ամենուն: Նախ ողջ եղողները պիտի լսեն, եւ ապա մեռելները պիտի արթնցուին որպէս զի լսեն, հնազանդին ու ապրին:

Աստուծոյ թագաւորութեան ատեն՝ ա'լ պէտք պիտի չըլլայ բանտերու եւ յիմարանոցներու, հիւանդանոցներու կամ դեղերու, ինչու որ Տէրը պիտի բժշկէ բոլոր Իրեն հնազանդողներուն միտքերն ու մարմինները: Նոյն իսկ դաշտի դաղաններուն ու երկիւրից թուռներուն վրայէն Սատանային ունեցած ամբարիշտ աղդեցութիւնը պիտի վերցուի, եւ անոնք Եհովա Աստուծոյ օրհնութիւնը պիտի երգեն: Ձիւրը ցարդ խորհրդանշան եղած են պատերազմի ու սպառազինութեան, քանզի մարդիկ այդպիսի նպատակներու համար դորձածած են դանոնք: Թագաւորութեան ատեն ա'լ պատերազմ տեղի պիտի չունենայ. եւ ձիւրու մասին գրուած է. «Այն օրը ձիւրուն ասնձի զարդերուն վրայ ՍՐԲՈՒԹԻՒՆ ԵՆՈՎԱ-

Յի (արձանադրութիւնը) պիտի ըլլայ» (Չաք. ԺԴ. 20, տես անգլ. Ս. Գիրքը): Խորհրդարանական լեզուով՝ այդ զարդերը կամ զանդակները ուշադրութիւն պիտի հրաւիրեն այն իրողութեանը վրայ թէ՛ յարատեւաբար աւրող իւրաքանչիւր արարած պարտի վառը ու պատիւ բնծայել Եհովա Աստուծոյ, որ Անոր թագաւորութեան կիրարկութեամբը անսպառ օրհնութիւններ բերած պիտի ըլլայ բովանդակ ըստեղծադործութեան: Այն ժամանակ՝ ամէն ոք լիովին ու բացարձակապէս նուիրուած պիտի ըլլայ Անոր արդար գատին: Աստուած՝ Իր հաւատարիմ մարդարէին տեսիլք մը շնորհեց՝ Իր թագաւորութեան օրով երկրիս ժողովուրդներուն համար գալիք այդ օրհնութեան օրուան մասին: Երախտագիտութենէ մղուած՝ այդ մարդարէն Սաղմ. ձԾ. 6-ին մէջ սա բառերը գործածած է. «Օրհնեցէք զանիկա (Եհովա) . . . ամէն շունչ ունեցող թող Տէրը օրհնէ»: Ահա ա'յդ պիտի ըլլայ երկրիս համայն ժողովուրդներուն պատշաճ դիրքը՝ երբ Քրիստոսի իշխանութեան տակ դրուած Աստուծոյ թագաւորութիւնը՝ զանոնք կատարելապէս օրհնէ այդ արդարադատ իշխանութեան եւ անոր օրհնութիւններուն ներքեւ:

Հասած է ժամանակը որ լրջօրէն մտածենք: Երկրիս ամբողջ բնակչութիւնը տաղնապի ու անձկութեան մէջ է: Միայն մէկ դարման կայ, եւ ատիկա է Քրիստոսի իշխանութեան տակ դրուած Աստուծոյ թագաւորութիւնը: Անկատար մարդոց ծրագրիներուն հետեւելով ժամանակ մի՛ վատնէք: Այդ մարդոց մտադրութիւնները որքան ալ որ բարի եղած ըլլան՝ անոնց ծրագրիները բացարձակ ձախողութեան դատապարտուած են, ինչու որ ա'լ եկած է Աստուծոյ ժամանակը՝ որ նա մէկ կողմ քչէ Իր թագաւորութեան հակառակ ամէն ինչ: Բոլորիս ալ ծանօթ է թէ միլիոնաւոր սգաւորներ կան: Կը յորդորեմ զձեզ որ լայ՛ք դադրիք ու չօրցնէք ձեր արցունքները: Բազմողորմ եւ ամենակարող Աստուծոյ ձեռքին նայեցէք հաւատքով ու վստահութեամբ, որ ներկայիս պիտի հարուածէ ամբարիշտ աշխարհը, եւ յետոյ արագօրէն պիտի բուժէ այն ամէն մարդիկը՝ որոնք Իր արդար օրհնքներուն կը հնաբան-



դին: Նա արդարութեան, իմաստութեան, սիրոյ եւ
զօրութեան Աստուածն է, եւ Անոր շնորհալի ձեռքէն
կու դայ իր արարածներուն բարօրութեանը հետ
կապ ունեցող ամէն ինչ: Թող բոլոր արարածները
Անոր դառնան, Անոր օրէնքներուն հնազանդին եւ
Անոր սուրբ անունը փառաբանեն:

Հարկ չկայ որ ձեզի, բարեացակամ անհատնե-
րուդ, ըսեմ թէ դուք խաղաղութեան, բարգաւաճու-
թեան, կենաց ու երջանկութեան կը ցանկաք: Գիտ-
ցած եղի՞ք թէ՞ Նշովան ձեր մշտնջենական բարեկամն
է: Անոր վկաները, որոնց գլխաւորն է Քրիստոս Յի-
սուս, ձեր բարեկամներն են. քանզի անոնք՝ գթու-
թեանց ու ամէն մխիթարութեանց Աստուծմէն՝ խա-
ղաղութեան պատգամը կը բերեն ձեզի: Երանի՛ թէ՞
ձեր ականջներուն հնչող Անոր Թագաւորութեան այս
քաղցր պատգամը ձեզ վեր բարձրացնէր ձեր վշտե-
րէն եւ մխիթարութիւն պարգեւէր ձեր սրտին, ու
երանի՛ թէ՞ դուք յաւիտեան Նշովայի օրհնութիւն-
ները ստանայիք եւ շարունակաբար Անոր սուրբ
անունը փառաբանէիք:

Լաքակազմ Գիրքեր

1. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ— 384 էջոց:
2. ԱՍՏՈՒԾՈՅ ՔՆԱՐԸ— 384 էջոց:
3. ՀԱԶԱՐԱՄԻԻ ԱՐՇԱՆՈՅՍԸ— 522 էջոց:
Հատը 35¢, իսկ երեքը միասին \$1.00:

Գեղեցիկ կողմերով 64 էջոց Գրքոյկներ

1. ՃԳՆԱԺԱՄԸ:
2. ՎԵՐՁԻՆ ՕՐԵՐԸ:
3. Ո՞ՒՐ ԵՆ ՄԵՌԵԱՆՆԵՐԸ:
4. ՊՍԵՐՍԱՅԻՆ ԹԷ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ:
5. ԴԺՈՒՔ, ԻՆՉ Է ԱՆ, Ո՞Վ ԿԱՅ ՀՈՆ:
6. ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ, ԱՇԽԱՐՀԻ ՅՈՅՍԸ:
7. ԲԱՂՁԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ:
8. ՍՓՈՓԱՆՔ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ ՀԱՄԱՐ:
9. ԺՈՂՈՎՈՐԴԻՆ ԴՐՕՇԱԿԸ:
Հատը 5¢, իսկ ուել վեցը միասին 25¢:

Բոլոր ապստամբները շրջապատու են ԴԻՏԱՐԱՆ-ի
Հասցէին, որն է հետեւեալը.

THE TIDARAN, 117 Adams St., Brooklyn, N.Y., U.S.A.



